2026, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (694)

Տիրոջդ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Բանակի օրվա առիթով

Այր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական Մեր սերը և Հայրապետական օրհնությունն ենք բերում Հայոց բանակի սպաներին ու զինվորներին և համայն մեր ժողովրդին՝ Բանակի օրվա առիթով:

Նորանկախ մեր պետականության ձևավորման տարիներին ծնունդ առած մեր բանակը իր առաքելության մեջ հատկանշվել է արդարության ու ազատության համար անվեհեր պայքարով: Հայոց բանակը մեր պետականության հիմնասյուներից է՝ կոչված ապահովելու խաղաղությունը մեր երկրի և անվտանգությունը մեր ժողովրդի: Ադրբեջանի կողմից սանձազերծված Արցախի բռնազավթման պատերազմի ընթացքում մեր բանակի մարտիկները անվեհեր պայքար մղեցին, նահատակվեցին բազում հայորդիներ: Նրանց հերոսական սխրագործությունները մշտապես ոգեշնչելու են մեր զորականներին իրենց նվիրյալ ծառայության մեջ:

Հայրապետիս մաղթանքն է, որ Հայոց բանակը՝ իբրև մշտարթուն պաշտպանը մեր երկրի, շարունակի քաջաբար հսկել մեր պետության սահմանները՝ իր արիությունն ու տոկունությունը շաղախելով առ Աստված հավատքով՝ ըստ առաքյալի խոսքի. «Զորացե՛ք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ և Աստծու սպառազինությունը հագեք» (Եփ. 6.10):

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերն Իր Սուրբ Աջով պահապան ու զորակից լինի մեր բանակի սպաներին ու զինվորներին, խաղաղություն հաստատվի համայն աշխարհում ու մեր հայրենիքում, և հավատավոր մեր ժողովուրդը նորանոր ձեռքբերումներով հարատևի ապահովության ու բարօրության մեջ. ամեն:

Գարեգին Բ Կաթողիկոս.
«Մեր աղոթքն է, որ բոլոր գերյալները շուտափույթ և ապահովաբար վերադառնան հայրենիք»

Խիթարություն և հոգու ուրախություն էր Մեզ համար տեղեկանալ Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահվող չորս հայորդիների՝ հայրենիք վերադարձի մասին:

Մաղթում ենք, որ Տիրոջ օրհնությամբ և համայն մեր ժողովրդի զորակցությամբ նրանք վերականգնեն իրենց կյանքի խաղաղ ու բնականոն ընթացքը՝ ընտանյաց ու սիրելիների հետ միասին:

Մեր աղոթքն է, որ բոլոր գերյալները շուտափույթ և ապահովաբար վերադառնան հայրենիք:

Թող Աստված խաղաղության շնորհի ներքո պահի աշխարհը համայն, մեր հայրենիքն ու մեր ողջ ժողովրդին:

Հանրապետական մաղթանք և այց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ Հայոց բանակի օրվա առիթով





Դեկտեմբերի 28-ին՝ Հայոց բանակի օրվա կապակցությամբ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում հոգևոր դասը և արարողությանը ներկա հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Բարձրյալն Աստված՝ հայցելով, որ Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի մեր զինվորներին ու սպաներին, անսասան պահի հայրենի երկիրը և իր խնամքի ներքո պահպանի համայն մեր ժողովրդին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի պաշտպանության նահատակված քաջորդիների հիշատակին և աղոթք բարձրացնելու նրանց հոգիների հանգստության համար:

Նորին Սրբությունն ու եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաև ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

Մայր Աթոռում կատարվեց հոգեհանգստյան կարգ հանուն հայրենիքի նահատակված քաջորդիների համար

Դեկտեմբերի 27-ին՝ հանուն հայրենիքի զոհվածների հիշատակի և խոնարհումի օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց հոգեհանգստյան կարգ: Եկեղեցականաց դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված՝ հանուն այրենիքի իրենց կյանքն ընծայաբերած քաջորդիների հոգիների խաղաղության ու հանգստության համար:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ հունվարի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով: Նիստը վարեց Վանական խորհրդի ատենապետ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

ԳՀԽ ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին: Ժողովի օրակարգում ընդգրկված էին Եկեղեցու կանոնական, վարչական, կարգապահական խնդիրներին առնչվող հարցեր:

Ապօրինի ազատազրկված եկեղեցականների, ազգային բարերարի նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթների, դատավարական գործընթացների և կայացված դատավճիռների, ինչպես նաև հոգևորականների նկատմամբ իրականացվող բռնաճնշումների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան փաստաբան, ի. գ. թ. Արա Զոհրաբյանը, փաստաբաններ Արսեն Բաբայանը և Հովհաննես Խուդոյանը:

Արձանագրվեց, որ եկեղեցականների նկատմամբ առաջադրված մեղադրանքները և կիրառված խափանման միջոցները հիմնված են ոչ իրավաչափ փաստերի վրա և իրավական առումով չեն բխում օրինականության ու արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից, կրում են ընտրովի և խտրական բնույթ:

Գերագույն հոգևոր խորհուրդը խստորեն դատապարտեց ծառայություն իրականացնող հոգևորականների նկատմամբ գործադրվող ճնշումները, արձանագրեց, որ դրանք ՀՀ Սահմանադրության և օրենսդրության ակնհայտ խախտումներ են, որոնք ունեն շարունակվող մտահոգիչ միտումներ:

Ժողովականները մերժելի նկատեցին պետական և իրավապահ մարմինների ներգրավմամբ իրականացվող ապօրինի գործողությունները և Եկեղեցու ներքին կյանքին հակասահմանադրական միջամտությունները: ➥ էջ 2

Գերագույն հոգևոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

↩ էջ 1

Գերագույն հոգևոր խորհուրդն իր գնահատանքը հայտնեց փաստաբաններին՝ նրանց հետևողական աշխատանքի՝ եկեղեցականների ու ազատազրկված հայորդիների իրավունքների պաշտպանության գործում ներդրած կարևոր ջանքերի համար:

Գերագույն հոգևոր խորհուրդը քննության առավ Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սարոյանի կարգազանց ընթացքը:

Արձանագրվեց, որ վերջինս, վիճարկելով թեմակալ առաջնորդի պաշտոնից ազատվելու և Մայրավանք վերադառնալու Հայրապետական տնօրինությունը, փաստացի դրժել է հնազանդության իր ուխտը և դատական հայց ներկայացրել ընդդեմ Սուրբ Էջմիածնի՝ պահանջելով վերականգնել առաջնորդական իր հանգամանքը:

Գերագույն հոգևոր խորհուրդը անդրադարձ կատարեց նաև Գևորգ եպիսկոպոսի հրապարակային ելույթներում և հայտարարություններում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, իր ծառայակից եկեղեցականների և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին հնչեցրած զրպարտիչ մեղադրանքներին, խստորեն դատապարտեց նման վարքագիծը՝ այն գնահատելով եկեղեցական կարգի, կանոնական հնազանդության ու եկեղեցական միաբանության սկզբունքների կոպիտ խախտում, և առաջարկ ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Տ. Գևորգ եպս. Սարոյանին հրչակելու կարգալույծ:



Ազգային ժողովում եկեղեցուն առնչվող օրինագծերի մասին զեկույցով հանդես եկավ ի. գ. դ., պրոֆեսոր տիար Գևորգ Դանիելյանը: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց հողային և պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություններին, որոնք հակասում են գործող քաղաքացիական և ոլորտային օրենսդրության հիմնադրույթներին, խախտում են սեփականության իրավունքի հիմնարար սկզբունքները և ստեղծում են անհիմն ենթադրություններ՝ իբր Հայ Եկեղեցու կողմից պաշտամունքային հուշարձանների օտարման վտանգի մասին: Զեկույցում ընդգծվեց, որ հիշյալ օրենսդրական նախաձեռնությունները, որոնք չունեն իրական իրավակարգավորիչ անհրաժեշտություն, ուղղված չեն սրբավայրերի և հոգևոր-մշակութային հուշարձանների անաղարտ պահպանության խնդիրներին, չեն լուծում որևէ շոշափելի հանրային խնդիր և հիմնականում ծառայում են հակաեկեղեցական տրամադրությունների ձևավորմանն ու խորացմանը: ԳՀԽ դիրքորոշումն է, որ ընդհանրապես արգելվի պաշտամունքային հուշարձանների օտարումը՝ անկախ սեփականության ձևից:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հրավիրված Եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման հարցերին: Որոշվեց ձևավորել կազմակերպիչ հանձնախումբ՝ ժողովի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները համակարգելու նպատակով:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

Հայտարարություն

Նոյեմբերի 21-ին Հայ Եկեղեցու, այսպես կոչված, բարեռնորոգման շարժման ինքնահռչակ համակարգող խորհրդի անունից տարածվեց հայտարարություն, որով հերթական անգամ խեղաթյուրվում են իրողությունները, և փորձ արվում մոլորեցնել հավատավոր մեր ժողովրդին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խորապես ցավում է հակաեկեղեցական արշավին ու դրանում ներգրավված կարգալույծներին համախորհուրդ տասը եպիսկոպոսների որդեգրած պառակտիչ ընթացքի համար:

Իրականությունն այն է, որ Հայաստանի վարչապետի նախաձեռնած շարժմանը հարող եպիսկոպոսներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուղղված հորդորներն ու հրավերները ցայսօր մնացել են անպատասխան, և անտեսվել են կանոնական դաշտ վերադառնալու, խնդիրները եկեղեցական ատյաններում քննելու առաջարկները: Միևնույն ժամանակ թե՛ անցյալում, թե՛ առավել ևս այսօր հիշյալ եպիսկոպոսների կողմից որևէ կերպ չեն մատնանշվել իրատեսական ճանապարհները Եկեղեցու և իշխանությունների միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, ընդհակառակը՝ ակնհայտ ազդեցության ներքո շարունակ փորձեր են կատարում խնդիրները հանգուցալուծելու ոչ կանոնական դատապարտելի ուղիներով:

Անընդունելի է կասկածի տակ դնել եկեղեցական մարմինների իրավազորությունը, որոնց աշխատանքներին տասնամյակներ շարունակ հիշյալ եպիսկոպոսներից շատերը իրենց մասնակցությունն են բերել, որոշումներ ընդունել և պատասխանատվություն ստանձնել՝ եկեղեցու գործունեության հետ առնչված: Այս կապակցությամբ անհրաժեշտ պարզաբանումներ արդեն իսկ պաշտոնապես տրվել են:

Իշխանությունների հակասահմանադրական քայլերի հետևանքով ստեղծված մտահոգիչ իրավիճակի հաղթահարման ճանապարհներից է նաև հրավիրյալ եպիսկոպոսաց ժողովը, որի կանոնականությունը որևէ կերպ չի պայմանավորվում գումարման վայրով: Եկեղեցական կյանքը հուզող կարևորագույն հարցերը, այդ թվում՝ բարձրաձայնվող խնդիրները, պետք է քննության առնվեն և պատշաճ լուծումներ գտնեն Եկեղեցու ընկալյալ կարգի համաձայն, բացառապես եկեղեցական ժողովական մարմիններում: Հարկ չկա կանխակալ տրամադրություններ ձևավորել և հիմնազուրկ պատճառաբանություններով ու կեղծ մեղադրանքներով փորձել ձախողել ժողովի գումարումն արտերկրում, երբ ակնհայտ են եկեղեցականության հանդեպ Հայաստանում տարատեսակ բռնաճնշումները:

Եկեղեցական կյանքի վերանորոգումը և զորացումը շարունակական գործընթաց են, որ պահանջում են աղոթական միություն, տևական ու միասնական աշխատանք և ուխտապահություն:

Հավատարիմ իր Տերունաշնորհ առաքելությանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, եկեղեցական աշխարհասփյուռ կառույցներով իր ջանքերն է բերելու՝ ի նպաստ հայոց անկախ պետականության զորացման, մեր ժողովրդի խաղաղ, բարօր ու առաջընթաց կյանքի:

Հայտարարություն

Մայր Աթոռը խստորեն դատապարտում է ՀՀ Սահմանադրության և օրենքների բացահայտ խախտումներով իշխանությունների հերթական միջամտությունը Եկեղեցու ներքին գործերին, որով քրեական վարույթ է նախաձեռնվել և քրեական հետապնդում է հարուցվել Գերագույն հոգևոր խորհրդի հոգևորական անդամների նկատմամբ՝ դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով:

Հունվարի 31-ին Գերագույն հոգևոր խորհրդի հոգևորական անդամներին ծանուցագրեր են հղել և պահանջել՝ որպես մեղադրյալ ներկայանալ Քննչական կոմիտե, ինչը վերստին ակնհայտ վկայություն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ ձեռնարկված արշավի և հոգևորականների նկատմամբ իրականացվող բռնաճնշումների:

Քրեական հետապնդման շրջանակներում արգելափակվել է Գերագույն հոգևոր խորհրդի եպիսկոպոս անդամների ելքը երկրից: Այս դատապարտելի գործընթացը մեր պետության օրենքներով և միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու հիմնարար իրավունքների կոպտագույն խախտում է, որի նպատակն է խաթարել Հայ Առաքելական Եկեղեցու բնականոն գործունեությունը, մասնավորաբար առաջիկայում Ավստրիայում գումարվելիք եպիսկոպոսական ժողովի աշխատանքները:

Մայր Աթոռը կոչ է անում Հայաստանի Հանրապետության իշխանությանը և իրավապահ համակարգին գործել բացառապես ՀՀ Սահմանադրության և օրենքի շրջանակներում, արդարության և ճշմարտության բարձրագույն սկզբունքներին հավատարմությամբ և հարգել Եկեղեցու ինքնավարության իրավունքը:



Քրիստոնեական միասնության աղոթք Միածնաէջ Մայր Տաճարում

Հունվարի 25-ին Միածնաէջ Մայր Տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Մովսես վարդապետ Սարգսյանը:

Սրբազան արարողության ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց քրիստոնեական միասնության աղոթք՝ որպես ամփոփում հունվարի 18–25-ին Վատիկանի և ԵՀԽ-ի կողմից կազմակերպված ամենամյա քրիստոնեական միասնության աղոթքի շաբաթվա, որն այս տարի նվիրված էր Հայաստանին: Աղոթքի շաբաթվա նյութերը պատրաստվել էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից, որոնք կազմվել էին Սուրբ Ներսես Շնորհալու Արևագալի ժամերգության հիման վրա: Անցնող շաբաթ ողջ քրիստոնյա աշխարհն աղոթեց տասնյակ լեզուներով թարգմանված հայկական աղոթքներով:

Քրիստոնեական միասնության աղոթքի շաբաթվա՝ այս տարվա խորագիրն էր «Մեկ մարմին և մեկ հոգի», որի ընթացքում աշխարհի քրիստոնյաներն աղոթք բարձրացրին հայ ժողովրդի ու Հայոց Եկեղեցու, ինչպես և քրիստոնեական միասնության և համերաշխության համար:

Կարգալույծ է հռչակվել Տ. Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը

Սույն թվականի հունվարի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ, իր դիմումի համաձայն, կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Արտյոմ Անանյան ավազանի անունով:

Կարգալույծ է հռչակվել Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը

Սույն թվականի հունվարի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ Գերագույն Հոգևոր Խորհրդի 27. 01. 2026 թ. որոշման, հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանին:

Կարգալուծության համար ի մասնավորի հիմք է ծառայել, որ նա վիճարկել է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից ազատվելու և Մայրավանք վերադառնալու վերաբերյալ Հայրապետական տնօրինությունը՝ խոչընդոտելով Մասյացոտնի թեմի բնականոն գործունեությունը, և դատական իր հայցով առիթ ու պայման ստեղծել՝ իշխանության պատկան կառույցների կողմից ներեկեղեցական կյանքին միջամտելու համար:

Գևորգ եպս. Սարոյանը կանոնական շեղումներով և կարգազանց գործողություններով դրժել է հնազանդության ուխտը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Արման Սարոյան ավազանի անունով:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Գերաշնորհ Տ. Պարթև եպիսկոպոս Բարսեղյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդի պաշտոնից, նշանակվել է Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդ:

Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանը Հայրապետական տնօրինությամբ ազատվել է իր պաշտոնից:

Մեկ այլ տնօրինությամբ քրեակատարողական հիմնարկների հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը համատեղության կարգով նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սմբատյանը սույն թվականի հունվարի 23-ից նշանակվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան դպրանոցի և Քահանայից պատրաստման լսարանի տեսուչ:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

«Ուժեղ բանակն սկսվում է ուժեղ հոգուց»

Հարցազրույց ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության գնդերեց Տեր Պսակ քահանա Մկրտչյանի հետ

— Տե՛ր Հայր, ի՞նչ նպատակ ունի հոգևոր սպասավորությունը բանակում:

— Հոգևոր սպասավորությունը բանակում նախապատմություն ունի: Դեռևս Արցախյան առաջին ազատամարտի տարիներին մի շարք հոգևորականներ, որոնք սպասավորում էին Արցախի թեմում, կամավորաբար ստանձնեցին հոգևոր խնամք ազատագրական պայքարի ջոկատների համար: Այնուհետև հետագա տարիներին կարիք առաջացավ էլ ավելի կուռ և համակարգված տեսք տալու հոգևոր ծառայությանը, կարևորվեց հոգևորականի մշտամնա ներկայությունը բանակում՝ զինվորի և սպայի կողքին: 1997 թ. ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև ստորագրվեց հուշագիր, որով այլևս հիմք դրվեց հոգևորականների համակարգված ծառայությանը Հայոց բանակում:

Հիմա, ավելի որոշակի պատասխանելով Ձեր հարցին, ցշեմ, որ հոգևոր սպասավորությունը բանակում ունի խոր և բազմաշերտ նպատակ. այն միայն կրոնական ծեսերի կատարում չէ, այլև զինվորի հոգու, խղճի և մտքի կոփման ծառայություն: Բանակը մարդուն կանգնեցնում է կյանքի ու մահվան, վախի ու պատասխանատվության ընտրության սահմանագծին, և այդտեղ հատկապես անհրաժեշտ է հոգևոր առաջնորդությունը: Զինվորն ամեն օր առերեսվում է վտանգի, սթրեսի, երբեմն նաև կորուստների հետ, և հոգևոր սպասավորությունն օգնում է նրան՝ *հաղթահարելու վախը, ձեռք բերելու ներքին խաղաղություն, ապավինելու Աստծուն:*

Ինչպես ասում է սաղմոսերգուն. «Տերն իմ ապավենն է, չեմ երկնչի» (Սաղմ. 26:1):

Հավատքը զինվորին տալիս է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր քաջություն: Բանակում կարևոր է ոչ միայն ուժը, այլև բարոյական կերպարը: Հոգևոր սպասավորը կամ, ինչպես ընդունված է նրան անվանել, գնդերեցը, սովորեցնում է՝ *խիղճ ունենալ, արդար լինել, հարգել մարդու արժանապատվությունը, զսպել բարկությունն ու ատելությունը:*

Հոգևոր սպասավորությունն ապացուցում է, որ հայրենիքի պաշտպանությունը պարզապես պարտք չէ, այլև սրբազան ծառայություն: Գնդերեցի ներկայությունը զինծառայողի կյանքում հավաստիքն է նրա, որ զինվորը մենակ չէ, Եկեղեցին նրա կողքին է, Աստված նրա հետ է նույնիսկ անելանելի թվացող իրավիճակներում: Մեր նպատակն է զինվորին դարձնել ոչ միայն ոգով ուժեղ մարտիկ, այլև հոգով առողջ, հավատքով հաստատ և խղճով մաքուր մարդ, քանի որ ուժեղ բանակն սկսվում է ուժեղ հոգուց:

Մյուս կողմից՝ քրիստոնեական ուսուցումը զինվորին հիշեցնում է, որ ինքը պարզապես մարտիկ չէ, այլև Աստծո պատկերով ստեղծված մարդ: Շատ զինվորներ ունեն տագնապներ, ընտանիքից հեռու լինելու խնդիրներ, կարոտ, մեղքի կամ կորուստի ծանր զգացում: Գնդերեցն այդ պարագայում դառնում է լսող, մխիթարող, խոստովանություն ընդունող, աղոթքով զորացնող: Սա հոգևոր իրական թերապիա է, որը բուժում է սրտի վերքերը:

— Ինչպե՞ս է քրիստոնեական հավատքը ձևավորում զինվորի գիտակցությունն ու վարքը:

— Քրիստոնեական հավատքը զինվորի կյանքում միայն աղոթքին կամ ծիսակատարություններին նրան մասնակից դարձնելու հարցը չէ, այլև, որ ամենակարևորն է, նրա մեջ հոգևոր գիտակցության ձևավորումը, որը փոխում է թե՛ մտածելակերպը, թե՛ վարքը: Եթե զենքը պաշտպանում է մարմինը, ապա հավատքը պաշտպանում է հոգին: Այս գիտակցությունը բարձրացնում է զինվորի արժանապատվությունը, կարևորում նրա անհատականությունը. զինվորն սկսում է իրեն տեսնել որպես սրբազան պատասխանատվություն կրող անձի: Նաև օգնում է՝ չընկրկելու դժվարությունների առաջ՝ ավելի իմաստավորելով զինծառայությունը:

«Դուք Աստծո տաճար եք» (Ա Կորնթ. 3:16),— ասում է Պողոս առաքյալը: Ես հաճախակի պիտի մեջբերումներ անեմ Սուրբ Գրքից, որովհետև Սուրբ Գիրքն է հոգևորականի ամենաազդեցիկ միջոցը:

Վախը բնական երևույթ է մարդու կյանքում, բայց հավատքը չի թողնում, որ վախն իշխի մեզ վրա: Զինծառայողները մարդիկ են, որոնք առավել, քան ուրիշները, իրենց ծառայության մեջ ենթակա են դեմ առ դեմ կանգնելու վտանգի առաջ, ուստի հավատի ամրությունը նրանց օգնում է՝ վստահելու Աստծուն, իսկ քրիստոնեական վստահությունը սովորեցնում է, որ մեր բոլորիս կյանքը Աստծո ձեռքում է, մահն էլ վախճանը չէ ամեն ինչի. Տերը մեզ հետ է ամեն տեղ: Նա հասկանում է, որ իր առաքելությունը ոչ թե սպանելն է, այլ կյանքը և արդարությունը պաշտպանելը:

«Եթե Աստված մեզ հետ է, ո՞վ մեզ դեմ կլինի» (Հռոմ. 8:31). ահա քրիստոնյայի վարքի և գիտակցության ձևավորման իրական բանաձևը:

— Հավատքը կարո՞ղ է զորացնել սերը հայրենիքի հանդեպ: Հայրենիքի պաշտպանությունը կարելի՞ է դիտարկել որպես հոգևոր առաքելություն:

— Քրիստոնեության հիմքում սերն է, իսկ հայրենիքի հանդեպ սերը նույն սիրո բնական շարունակությունն է: Մենք սիրում ենք մեր հողը, մեր ժողովրդին, մեր ընտանիքը, մեր տունը: Սա Աստծուց տրված բնական և արդար զգացում է: Սուրբ Գիրքն ասում է. «Ով իր ընտանիքի մասին հոգ չի տանում, հավատից ուրացած է» (Ա Տիմ. 5:8): Եթե մարդը պարտավոր է հոգալ իր ընտանիքի մասին, ապա առավել ևս՝ իր ժողովրդի և հայրենիքի մասին: Հավատքը սովորեցնում է, որ հայրենիքը պարզապես տարածք չէ, այլև Աստծո կողմից մեզ վստահված ժառանգություն:

Աստված ազգերին պարգևել է հայրենիք և ինքնություն: Հայ ժողովրդի համար հավատքն ու հայրենիքը դարերով միաձուլված են եղել, ինչը վկայում է, որ հավատքը պահպանել է հայրենիքը, իսկ հայրենիքը՝ հավատքը: Ուստի՝ հայրենիքի հանդեպ սերը դառնում է նաև երախտագիտություն՝ ուղղված առ Աստված:


Քրիստոս ասում է. «Չկա առավել մեծ սեր, քան որ մարդ իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15:13): Զինվորը հենց սա է անում. նա իր կյանքը վտանգում է՝ հանուն ուրիշների կյանքի: Սա արդեն ոչ միայն պարտք է, այլև սիրո միջոցով զոհողության դրսևորում, իսկ դա Ավետարանի սիրտն է: Այս իմաստով հայրենիքի պաշտպանությունը կարող ենք դիտարկել որպես ծառայություն Աստծուն՝ մարդկանց միջոցով:

Այսպես՝ հավատքը զորացնում է հայրենիքի հանդեպ սերը, քանի որ սովորեցնում է սիրել, զոհվել և պատասխանատվություն կրել: Հայրենիքի պաշտպանությունը կարող է և պետք է դիտվի որպես հոգևոր առաքելություն, քանի որ այն գիտակցված անձնազոհություն է, զրկանք կրելու պատրաստակամություն՝ հանուն աստվածային ժառանգության և արդարության: Կարճ ասած՝ զինվորը, որ հավատքով է ծառայում, դառնում է ոչ միայն մարտիկ, այլ նաև պահապան և վկա Աստծո սիրո:

— Բանակային կյանքն ինչպե՞ս է ձևավորում զինվորի բնավորությունը, բացահայտում նրա իրական ես-ը: Բանակը կարո՞ղ է դառնալ Աստծուն փնտրելու և հոգևոր ճանապարհի վերագտնման վայր:

— Բանակը յուրահատուկ դպրոց է: Այն ոչ միայն ռազմական պատրաստության, այլև զինվորի բնավորության վերակերտման և ներուժի բացահայտման դարբնոց է: Զինվորական կյանքը՝ իր խստապահանջությամբ, կարգապահությամբ և սահմանափակ հնարավորություններով, կարող է դառնալ մարդու ներքին աշխարհի կոփման հզոր գործոն: Այնտեղ մարդը հարմարավետությունից դուրս է, և հենց այդտեղ է երևում նրա իսկական «ես»-ը:

Բանակում զինվորները սովորում են ենթարկվել կանոններին, հարգել ժամանակը, կատարել պարտականությունները՝ անկախ անձնական ցանկություններից: Սա ձևավորում է ուժեղ կամք և ինքնակառավարում: Զինվորական կյանքում անհատը դառնում է խմբի մի մաս, սովորում է վստահել, աջակցել և կիսել դժվարությունները: Այո՛, ես կարծում եմ, որ շատերը Աստծո հետ անմիջական հանդիպում ունեցել են բանակային ծառայության ընթացքում: Երբ մարդը



զրկված է հարմարավետությունից, ընտանեկան միջավայրից և առօրյա շփումներից, նա սկսում է լսել իր ներքին ձայնը: Դժվարությունների մեջ էլ առավել է լսելի Աստծո կանչը: Տղաները, որոնք մանավանդ իրականացնում են մարտական հերթապահություն, ավելի աղոթասեր են, ավելի հավատքով՝ առ Աստված: Ամբողջացնելով ասածս՝ բանակում երիտասարդը ոչ միայն բացահայտում է իր «ես»-ը, այլ նաև գտնում է իր անհատականությունը:

— Որո՞նք են պատերազմի թողած հոգեկան ամենախոր վերքերը, ինչպե՞ս վերագտնել Աստծուն պատերազմից հետո: Հավատքը կարո՞ղ է բուժել պատերազմի պատճառած հոգեբանական վնասվածքները: Ի՞նչ պատգամ ունեք պատերազմին մասնակցած զինվորներին:

— Պատերազմը ոչ միայն մարմնի, այլև հոգու վրա է խոր հետքեր թողնում: Դրանք հաճախ անտեսանելի են, բայց կարող են տևել ամբողջ կյանքի ընթացքում: Պատերազմի բովով անցած զինծառայողների հետ իմ հանդիպումների ժամանակ նկատել եմ, որ պատերազմի մղձավանջը մշտապես ուղեկցում է շատերին: Սթրեսը, մեղքի զգացումը հետպատերազմյան ամենահաճախ հանդիպող խնդիրներն են: Այդ տառապանքը կրում են ոչ միայն ռազմական գործողություններ տեսած ու մասնակից անձինք, այլև նրանց ընտանիքի անդամները: 2020 թ. պատերազմից հետո և առ այսօր մենք՝ գնդերեցներս, մշտապես այցելել ու հոգևոր խնամք ենք տարել այդպիսի զինծառայողների ու նրանց ընտանիքների հանդեպ: Հոգևոր ծառայությանս ընթացքում ընտանիքները, որոնք զավակ են կորցրել, մեր միջոցով գտել են Աստծուն, դարձել եկեղեցականացված, մկրտվել ու կապել իրենց կյանքը Քրիստոսի հետ:

— Ինչպե՞ս է քրիստոնեությունը ներկայացնում զոհաբերության գաղափարը պատերազմում: Հայրենիքի համար կյանքը զոհելու սխրանքը ինչպե՞ս եք բացատրում հոգևոր տեսանկյունից

— Քրիստոնեական վարդապետության լույսի ներքո դիտարկելով՝ հայրենիքի պաշտպանության համար կյանքը զոհաբերելը սիրո և անձնազոհության բարձրագույն դրսևորում է: Այս ընկալման հիմքում ընկած է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքը. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15:13): Զինվորը՝ պատերազմի դաշտ գնալով, գիտակցում է մահվան վտանգը, և այդ քայլը անում է ոչ թե ինքնանպատակ, այլ սիրուց դրդված՝ հանուն իր հավատի ու հայրենիքի, հանուն իր ընտանիքի: Կյանքը զոհաբերել բարձր գաղափարների համար նշանակում է կրկնել Քրիստոսի ինքնազոհության սխրանքը: Պատերազմում հայրենիքի պաշտպանությունը պայքար է չարիքի, բռնության և անարդարության դեմ: Այս պարագայում զինվորը դառնում է արդարության պաշտպան: Սխրանքը մարտի դաշտում այն է, երբ զինվորը հաղթահարում է մահվան բնական վախը՝ հանուն բարձր արժեքի: Սա հոգու հաղթանակն է՝ հանդեպ մարմնի տկարությունների:

Քրիստոնեական հավատքը մահը չի համարում ավարտ, վերջակետ ամեն ինչի: Հայրենիքի, հավատքի համար իրենց կյանքը զոհաբերածներին Սուրբ Եկեղեցին համարում է նահատակ, մարտիրոս: Մեր հավատքը սովորեցնում է, որ ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն սրբությունների, չեն մահանում, այլ դառնում են ժառանգորդը հավիտենական կյանքի: Զոհաբերության գաղափարը սերտորեն կապված է Հարության հույսի հետ, նահատակվելով՝ մեր քաջորդիները հոգևոր հաղթանակ տարան մահվան հանդեպ: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ սրբացրել է «վասն հայրենեաց և վասն հավատոյ» նահատակվածների հիշատակը: Այս սրբադասման պատգամը հստակ է. հայրենիքը Աստծո կողմից տրված սրբազան ավանդ է, որի պաշտպանության համար նահատակությունը Հարության հաղթանակի սկիզբ է այս կյանքի մեջ:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել հետևյալ ճշմարտությունը. քրիստոնեության մեջ հայրենիքի և հավատի համար պատերազմում զոհաբերությունը ոչ թե մահվան փառաբանումն է, այլ անսահման սիրո և հավատարմության հաղթանակը, որը զինվորին դասում է սրբերի և հերոսների շարքին: Քրիստոնեությունը չի քարոզում անտարբերություն չարի հանդեպ:

— Ի՞նչ պատգամ ունեք այսօր ծառայող զինվորներին և նրանց ընտանիքներին:

— Իմ պատգամն է բոլոր այն տղաներին, որոնք անցել են պատերազմի մղձավանջի միջով ու կենդանի վերադարձել. դուք միայն մարտից վերադարձած զինվորներ չեք, դուք խաչակիրներ եք, որոնք անցել են կրակի միջով: Աստված ձեզ չի լքել և հիմա էլ ձեր կողքին է: Մի՛ ամաչեք ձեր արցունքներից, մի՛ փակվեք ձեր ցավի մեջ, մի՛ կարծեք, թե Աստված ձեզ մոռացել է, ձեր վերքերն ամոթ չեն, այլ վկայությունն են ձեր զոհաբերության: Չէ՞ որ Քրիստոս Ինքն էլ հարություն առավ վերքերով: Պատերազմը կոտրում է մեր սրտերը, բայց Աստված կարող է այդ կոտրված սրտերից նոր մարդ ստեղծել: Ինչպես Սաղմոսում է ասված. «Կոտրված և խոնարհ սիրտը Աստված չի անարգի» (Սաղմ. 50:19): Եվ հենց այդպիսի սրտերն են Աստծուն ամենամոտ:

Պատգամս ոչ միայն խոսք է, այլև աղոթք, սրտի հորդոր՝ ուղղված մեր զինվորներին: Ուզում եմ՝ մեր բոլոր զինվորները գիտակցեն, որ պարտադիր զինվորական ծառայությունը կարևոր առաքելություն է, որ զինվորական համազգեստը ոչ միայն պետության ու բանակի խորհրդանիշ է, այլև պատասխանատվության, արիության ու սիրո պարտավորություն: Աղոթքը թող լինի մեր զինվորների ամենօրյա զենքը, խաչակնքվելը՝ փրկության վահանը, Աստծո ներկայության զգացումը՝ խաղաղությունը:

Ծնողներին պատգամում եմ, որ մշտապես աղոթեն իրենց զինվոր զավակների համար, հպարտանան, որ հայրենյաց պաշտպան են ծնել, դաստիարակեն քաջորդիների, որոնք պատրաստ կլինեն առյուծաբար պաշտպանելու իրենց սրբությունները:

Ուզում եմ՝ բոլորս հիշենք ու գիտակցենք, որ հայրենիքի պաշտպանությունը միայն սրբազան պարտականություն չէ, այլև հոգևոր ծառայություն: Երբ ծառայում ենք արդարությամբ, հավատով և սիրով, մենք ոչ միայն մեր հողն ենք պահում, այլև պահպանում ենք Աստծո ավանդը:

Թո՛ղ Տերը անսասան պահի մեր հայրենյաց սահմանները, զորացնի մեր զինվորներին ու սպաներին, և թո՛ղ ամենակարող Բարձրյալի երկնառաք խաղաղությունը տիրի Հայոց աշխարհում հավիտենապես:

Հարցազրույցը՝ Աննի ՆԱԶԱՐՅԱՆԻ

Խմբագրության կողմից. *Բանակի տոնին ընդառաջ այս հարցազրույցը տեղի է ունեցել հունվարի 28-ին: Հաջորդ օրը՝ հունվարի 29-ին, հրապարակվեց ՀՀ պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի հրամանը, որով 2026 թ. փետրվարի 1-ից դադարեցվեց ՀՀ ԶՈՒ Հոգևոր ծառայության առաջնորդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից նշանակված գնդերեցների գործունեությունը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում:*

Սուրբ Հովհաննես Մկրտիչ՝ ճշմարտության ձայնը և նահատակների նախակարապետը

Հովհաննես Մկրտիչը Նոր Կտակարանի կենտրոնական և խորհրդանիշ կերպարներից է: Նրա անձի մեջ ամփոփված են Հին Կտակարանի մարգարեական սպասումը և Նոր Կտակարանի մեսիական հայտնության կանխորոշումը: Հիրավի, նա կանգնած է երկու Ուխտերի սահմանագծին՝ որպես վերջին մարգարեն Հին Ուխտի և առաջին վկան Նոր Ուխտի: Այդ կիզակետային դիրքն է, որ Հովհաննեսի կերպարին տալիս է բացառիկ աստվածաբանական խորություն: Հիսուս Քրիստոսը նրան այսպես է բնորոշում. «Կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել» (Մատթ. ԺԱ 11): Հովհաննեսը վերջինն է, որը կանգնած է սպասման ժամանակում, բայց առաջինն է, որը տեսնում է կատարումն ու լրումը:

Ղուկասը, ի տարբերություն մյուս ավետարանիչների, մանրամասն ներկայացնում է Հովհաննեսի նախածննդյան և ծննդյան պատմությունը՝ որպես աստվածային միջամտություն, որը հիշեցնում է Հին Կտակարանի մեծագույն կերպարների ծնունդները՝ Իսահակ, Սամսոն, Սամուել: Ավետարանիչը հատուկ ընդգծում է, որ նրա ծնողները՝ Զաքարիա քահանան և Եղիսաբեթը, «....որդի չունեին, և երկուսն էլ արդեն առաջացած տարիքում էին» (Ղուկ. Ա 7), ինչը հրեական միջավայրում մեծ անպատվություն էր համարվում:

Սակայն Աստծո փրկագործական ծրագիրը չի հապաղում, և Զաքարիայի՝ Տաճարում ծիսական խնկարկություն կատարելու ժամանակ Գաբրիել հրեշտակապետը հայտնում է մանուկ Հովհաննեսի ծնվելու լուրն ու կոչումը. «Նա Տիրոջ առաջ մեծ կլինի, գինի և օղի չի խմի ու մոր որովայնից սկսած՝ Սուրբ Հոգով կլցվի, Իսրայելի որդիներից շատերին էլ կդարձնի դեպի իրենց Տիրոջը՝ Աստծուն» (Ղուկ. Ա 15–16): Ըստ այս ավետաբեր խոսքի՝ Հովհաննեսը սրբացված անձ է, որի կյանքը պատկանում է ոչ թե իրեն, այլ Աստծուն:



Տինտորետտո. «Հովհաննես Մկրտչի ծնունդը», 1549 թ.

Հովհաննեսի՝ Աստծո ընտրյալ լինելու հանգամանքը հատկապես երևում է նրա՝ դեռևս Եղիսաբեթի որովայնում եղած ժամանակ. երբ Եղիսաբեթը հանդիպում է Մարիամ Կույսին, որն արդեն հղի էր Հիսուսով, մանուկը նրա որովայնում սկսում է խաղալ (Ղուկ. Ա 35–45): Մկրտչի ծննդյան տոնին նվիրված շարականում Գ. Սկևռացին Հովհաննեսին կոչում է «Առաքյալ»: Զաքարիայի մարգարեական օրհներգությունում նրա առաքելությունը հստակ ձևակերպվում է. «Եվ դու, ո՛վ մանուկ, Բարձրյալի մարգարեն պիտի կոչվես, որովհետև պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու Նրա ճանապարհները, տալու Նրա ժողովրդին փրկության գիտությունը՝ նրանց մեղքերի թողության համար» (Ղուկ. Ա 75–76):

Ղուկասը հակիրճ և իմաստալից նշում է. «Եվ մանուկն աճում ու զորանում էր հոգով: Ապրում էր անապատներում մինչև Իսրայելում իր երևալու օրը» (Ղուկ. Ա 80): Անապատը Սուրբ Գրքում մշտապես հանդես է գալիս իբրև փորձության, մաքրագործման և Աստծու հետ հանդիպման վայր: Հովհաննեսի համար այն դառնում է ոչ թե փախուստ աշխարհից, այլ սեփական առաքելության պատրաստություն: Այն, որ նա «հագնում էր ուղտի բրդից հագուստ և կաշվե գոտի՝ իր մեջքին» (Մատթ. Գ 4), ակնհայտորեն հիշեցնում է Եղիա մարգարեին (Դ Թագ. Ա 8), որով նա դառնում է մարգարեական ավանդույթի կենդանի շարունակողը: Իրապես, առանց Հովհաննես Մկրտչի կերպարի՝ Քրիստոսի հայտնությունն Ավետարաններում կկորցներ իր մարգարեական նախապատմությունը, իսկ ապաշխարության թեման՝ իր խիստ ու մաքուր հնչողությունը:

Հովհաննես Մկրտչի հրապարակային գործունեությունն սկսվում է որոշակի պատմական համատեքստում: Ղուկասը մանրամասն թվագրում է նրա քարոզչությունը՝ հիշատակելով Տիբերիոս կայսրին, ժամանակի քաղաքական ու կրոնական իշխաններին (Ղուկ. Գ 1–2): Այս կերպ նա ընդգծում է, որ մարգարեական խոսքը դուրս չէ պատմությունից, ընդհակառակը՝ դրա բեմում է:

Դարեր շարունակ կենդանի մարգարե չունեցած Իսրայելում Հովհաննեսի ձայնը հնչում է որպես սթափեցնող կանչ. «Ապաշխարե՛ք, որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը» (Մատթ. Գ 2): Նրա քարոզում ապաշխարությունը ոչ միայն ներքին զղջում է, այլև գիտակցության փոփոխություն: Մկրտիչը պահանջում է «ապաշխարության արժանի պտուղներ» (Մատթ. Գ 8), այսինքն՝ իրական բարոյական դարձ: Ավետարանները նրան չեն ներկայացնում լոկ որպես պատմական դեմքի, այլև իբրև դերակատարի աստվածային տնտեսության մեջ, որի բովանդակ առաքելությունը միտված է մեկ նպատակի՝ մատնանշել Քրիստոսին: Հովհաննեսը չի քարոզում ինքն իրեն, այլ սոսկ մնում է «անապատում կանչողի ձայն» (Մատթ. Գ 3): Նա ճանապարհ է բացում Աստծո Խոսքի համար: Չորրորդ Ավետարանում պարզորոշ կերպով Մկրտիչը նույնացվում է ձայնի հետ (Հովհ. Ա 23): Օգոստինոս Երանելին գրում է. «Ձայնը անցնում է, բայց Խոսքը մնում է»: Այսու՝ Հովհաննեսի հոգևոր կենսագրության բանալին է դառնում իր խոստովանությունը. «Նրա (Հիսուսի) գործը պետք է մեծանա, իսկ իմը՝ նվազի» (Հովհ. Գ 30): Սրանով Մկրտիչը նաև բանաձևում է քրիստոնեական ծառայության սկզբունքը՝ հաստատելով, որ սրբությունը ինքնադրսևորում չէ, այլ ինքնանվիրում:

Հովհաննեսի մկրտությունը ջրով է և ունի խորհրդանշական բնույթ: Այն մաքրում է, բայց չի փրկում. «Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարության մկրտությամբ, բայց Նա, Ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ Նրա կոշիկներն անգամ տանելու: Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. Գ 11): Այսպես՝ մկրտության տարբերության մեջ է, որ ակնհայտ է դառնում Հովհաննեսի խոր ինքնագիտակցությունը՝ իբրև միջնորդի և ոչ երբեք Փրկչի, քանի որ բուն գործը՝ դատն ու դատաստանը, վերապահված է իր հետևից Եկողին: Մատթեոսի համար Հովհաննեսը կամուրջ է Հին և Նոր Կտակարանների միջև. նրա և Հիսուսի գործի միջև գոյություն ունի մի անբաժանելի շարունակականություն, և Հիսուսն Ինքն էլ ընդունում է այն եզակի դերը, որ Հովհաննեսը կատարում է Աստծո քավիչ ծրագրերի ներսում (Մատթ. ԺԱ 13): ➥ *էջ 6*

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը



Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանց

«Քառակուսի է ձև Սրբոյ Տաճարին,
Չափ չառնելովս՝ չկարեմ ասել ճիշտ նորին
Բայց որչափ որ մինչև հիմայ Հայաստան,
Վանք տեսեր եմ, այս մեծ է քան զամենայն»:

Տասնիններորդ դարի նշանավոր հոգևորական Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանցը (Տոսպեցի) առաջին անգամ այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 1860 թ., Մատթեոս Կաթողիկոսի հրավերով, Մկրտիչ արք. Խրիմյանի (այդ օրերին Կ. Պոլսի Հայոց Պատրիարքն էր), Երեմիա և Իգնատիոս արքեպիսկոպոսների և ուրիշների հետ, երկրորդ անգամ՝ 1864 թ.: Երկրորդ ճանապարհորդության ողջ մանրամասնությունները Ղևոնդ վարդապետը շարադրել և հրատարակել է 1871 թ. Կ. Պոլսում: Հեղինակն այն գրել է չափածո, բաղկացած է երկու մասից, որոնք էլ իրենց հերթին բաժանված են գլուխների: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և միաբանական կյանքի մասին տեղեկություններն ամփոփված են ուղեգրության առաջին մասի 14–18-րդ գլուխներում: Ուղեգրությունը կարևոր աղբյուր է նաև ճանապարհորդության վայրերում բնակվող մարդկանց բարքերի ու սովորույթների ուսումնասիրության համար. «....Ուստի ես յետինս ի վարդապետաց, երբ մեր քաղցր և դժբախտ Հայաստանի շատ կողմեր յայց ելանելու սկսայ, ձեռն ի գործ արկի մեր տեսած վայրաց՝ գիւղից և քաղաքաց տեղագրութիւնս և տեղացի ժողովրդոց բարք և սովորութիւնս՝ դրոշմել ի գիր, ընթերցասէր Ազգայնոց իղձ և փափագ գոհ կացուցանելու յուսով» (տես Ղևոնդ վրդ. Փիրղալէմեանց Տոսպեցի, Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռն Արարատեան և անտի ի Կ. Պոլիս, Կ. Պոլիս, 1871, էջ Գ):

Կ. Պոլսից Սուրբ Էջմիածին երկրորդ ճանապարհորդությունը տևում է մեկ ամիս. 1864 թ. մարտի 8-ին Ղևոնդ վրդ. Տոսպեցին և նրա երկու ընկերները՝ Գրիգորն ու Ոսկանը, ուղևորվում են Կ. Պոլսից և ապրիլի 8-ին հասնում Մայր Աթոռ: Հասնելուն պես՝ նրանց Ղազարապատում սենյակ են տրամադրում, ապա առիթ է ընձեռվում հանդիպելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու հետ: Հանդիպման ժամանակ Հայոց Հայրապետը նրանց հարցեր է ուղղում Կ. Պոլսում կատարվող դեպքերի, անցուդարձի մասին, և նրանք ներկայացնում են իրավիճակը: Հանդիպման վերջում Մատթեոս Կաթողիկոսը Ղևոնդ վարդապետին առաջարկում է մնալ Մայր Աթոռում մինչև Սուրբ Հարության տոնը: Միաժամանակ Վեհափառը հոգ է տանում, որ նա Մայր Աթոռում եղած ժամանակ միաբանների հետ ճաշի առավոտյան և երեկոյան, ինչպես նաև հորդորում է. «Թէյի ատէն ևս չանցուցես լէր ներկայ, խմիր տաք-տաք որչափ հոգիդ սիրէ նա» (էջ 64): Նույն օրը՝ երեկոյան, միաբաններն այցելում են վարդապետին, ինչպես նա է գրում. «Այժմ չորս բոլորս եկեր լեցուեր են ցնծութիւն, եւ հալածուեր երեկոյեան դառնութիւն» (էջ 65):

Մի քանի օր անց Վեհափառ Հայրապետը Ղևոնդ վարդապետին նորից հրավիրում է Վեհարան, ջերմ վերաբերմունքի արժանացնում և զրույցի բռնվում: Այս անգամ ևս նրանց խոսակցության թեման Կ. Պոլսում տեղի ունեցող անցուդարձն էր. «Ճառեմ զարարս տաճկաստանցի Ազգայնոց, թէ ո՞նց նոքա նոր կանոնօք Պատրիարգ դրին՝ և ճիկ չհանին երբէք ամիրայք: Զերիցփոխանս հաստատեցին քուէով, ինչպէս նաև Վարչութիւն իւր ճիւղերով եկեղեցեաց թաղականներ կարգեցին» (էջ 65): Վարդապետը հայտնում է, որ Վարչությունն ակնկալում է Հայրապետի սուրբ օրհնությունը և առաջարկում, որ Մատթեոս Կաթողիկոսը կոնդակով քաջալերի Կ. Պոլսի Պատրիարքին, որ ժողովներում արագ լուծում տան ժողովրդի առաջ ծառացած խնդիրներին, առավելաբար նրանց, ովքեր գավառներում են բնակվում:

Զրույցի ժամանակ խոր մտահոգության առիթ է եղել նաև կաթոլիկ վարդապետությանը հարող հայերի հարցը: Վարդապետի համոզմամբ՝ նրանք աներկբա վերադառնալու են Հայոց Եկեղեցու գիրկը, և «Անմիջապէս պատռի պիտի այն ուռկան, և ճիզվիթաց ձգելով ջանս ընդունայն» (էջ 66): Արևմտահայերի հոգևոր կյանքը խաթարողներից էին Ամերիկայից ընտանիքներով ժամանած բողոքական միսիոներները: Այս բոլոր մտահոգությունները կիսելով՝ Հայոց Հայրապետը տեղեկացնում է, որ իր նախորդ գրության պատասխանը դեռ չի ստացել և այն ստանալուց հետո բոլոր հարցերի առնչությամբ կոնդակ կգրի և կուղարկի Կ. Պոլիս:

Ուղեգրության մեջ այնուհետև ուխտավոր վարդապետը մեկ առ մեկ թվարկում է այդ օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բնակվող և սպասավորող միաբաններին, նրանց մասին հաղորդում համառոտ տեղեկություններ. «Միայն կուզեմ միաբան հարց մի առ մի կարգաւ գրել զանունս ի սոյն տետրակի, որ կարդացողք հասկնան թէ քանի հատ րաբունի կան ի Մայր Աթոռն Այրարատ» (էջ 79): Ըստ բերված անունների՝ վանաբնակ միաբանները քսանյոթն էին՝ իրենց գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին. «Ի սոցանէ զատ շատ րաբունք յԱթոռէն, այժմ վիճակեր խրկուած են Սիւնդէն: Ոմն առաջնորդ՝ և ոմն գործովք Սուրբ Գահին, քաղաքաց մէջ՝ կամ թէ վանքերն զբաղին: Մենք ներկայ հարց միայն զանունս գրեցինք, բացակայիցն՝ որ չեմ ծանօթ լռեցինք» (էջ 79): Հիշատակելով Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցուն՝ գրում է. «Հայոց մեծաց ընդհանրական հովուապետ, որ բազմելով ի գահ մեծին Թադէի, օտարաց դէմն՝ զայն պաշտպանէ ըստ կարի» (էջ 79): Հայոց Հայրապետից հետո հիշատակում է այդ օրերին Մայր Աթոռում բնակվող հինգ եպիսկոպոսների: Եղիազար եպիսկոպոսը Մայր Տաճարի լուսարարապետն էր՝ Սիմեոնի անդամ: Սիմեոնի անդամ էր նաև Հոբյանց տոհմից Գրիգոր սրբազանը: Մայր Աթոռում էին նաև Գևորգ արքեպիսկոպոս Մկրտիչյանը, Եգնավոր մականվամբ հայտնի Գևորգ արքեպիսկոպոս Բզնունին և Ղազար արքեպիսկոպոսը, որ Ղևոնդ վարդապետի՝ Մայր Աթոռում եղած ժամանակ վախճանվում է. «Հանդիսատես եղէ թաղման մեծ արիւոյն, ո՛հ, ո՞նց պատեր ուղարկաւորք տխրութիւն» (էջ 79):

Եպիսկոպոսներից հետո հիշատակում է քսաներկու վարդապետների ու աբեղաների: Ուղեգրությունը պարունակում է ուշագրավ տեղեկություններ Մայր Աթոռի ներքին կյանքի և միաբանների՝ հոգևոր աղոթական

Անունը՝ որպես գոյաբանական և աստվածաբանական խորհրդանիշ

Սկիզբը՝ թիվ 1

Արարման և անկման լեզուն՝ ըստ որոշ անունների

ԱԴԱՄ – «ՄԱՐԴ», «ՀՈՂԵՂԵՆ»

«Եվ Տեր Աստված մարդ ստեղծեց երկրի հողից» (Ծննդ. Բ 7): «Ադամ» բառը կապվում է եբրայերեն «ադամա»՝ հող բառի հետ: Մարդու անունը բացահայտում է նրա երկակի բնույթը՝ հողեղեն, բայց Աստծո շնչով կենդանացած: Փիլիսոփայական մեկնաբանությամբ՝ Ադամ անունն անգամ հակադրություն է՝ փոշի և փառք, մահկանացու և հավիտենական կոչում ունեցող:

ԵՎԱ – «ԿՅԱՆՔ ՏՎՈՂ»

«Եվ մարդը կնոջը կոչեց Եվա, որովհետև նա բոլոր կենդանիների մայրն էր» (Ծննդ. Գ 20): Եվա նշանակում է «կյանք», «կյանք տվող»: Այստեղ անունը կանխորոշում է առաքելությունը: Թեպետ Եվան անկման մասնակից է, նա դառնում է փրկության խոստման կրողը. «....նրա սերմը կջախջախի քո գլուխը» (Ծննդ. Գ 15):

ԿԱՅԵՆ – «ՍՏԱՑՎԱԾՔ», «ԱՐԴՅՈՒՆՔ»

«Եվ Եվան ասաց. մարդ ծնեցի Տիրոջով» (Ծննդ. Դ 1): Կայեն նշանակում է «ստացվածք», «արդյունք»: Տիպաբանորեն սա մարդկային հպարտության առաջին լեզվական դրսևորումն է. եվան իր ծննդաբերությունն ընկալում է որպես ձեռքբերում: Սակայն նույն անունը դառնում է ողբերգության նշան. արդյունքը, որ ծնվեց հույսով, դարձավ եղբայրասպան:

ԱԲԵԼ – «ՇՈՒՆՉ», «ԱՆՑՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ», «ՍՈՒԳ»

Աբելի կարճ կյանքն ու մահը նրա անվան կատարյալ իրագործումն են: «Նրա արյունը խոսում է» (Եբր. ԺԲ 24). անցողիկ անունը դառնում է հավիտենական վկայություն:

Խոստում և ուղի պարունակող անուններ

ՆՈՅ – «ՀԱՆԳԻՍՏ», «ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ»

«Սա մեզ կմխիթարի մեր գործերից» (Ծննդ. Ե 29): Նոյ նշանակում է «հանգիստ»: Նա դառնում է հանգրվան դատաստանի և նոր արարման միջև: Տապանը՝ որպես շարժական աշխարհ, Նոյի անվան նյութականացումն է:

ԱԲՐԱՄ/ԱԲՐԱՀԱՄ – «ԲԱՐՁՐ ՀԱՅՐ»/«ԲԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՐ»

Աբրամը դառնում է Աբրահամ (Ծննդ. ԺՋ 5): Անվան փոփոխությունն աստվածաբանական վճիռ է: «Քո անունը այլևս Աբրամ չի լինի»: Անունը փոխել նշանակում է ճակատագիր փոխել:

ԻՍԱՀԱԿ – «ԾԻԾԱՂ»

«Աստված ինձ ծիծաղ տվեց» (Ծննդ. ԻԱ 6): Ծիծաղը դառնում է խոստման իրականացում: Անունը վկայում է անհավատությունից դեպի հավատ ճանապարհը:

Պայքար և իշխանություն ենթադրող անուններ

ՀԱԿՈԲ → ԻՍՐԱՅԵԼ – «ԱՍՏԾՈ ՀԵՏ ՊԱՅՔԱՐՈՂ»

«Դու մարդկանց հետ և Աստծո հետ պայքարեցիր և հաղթեցիր» (Ծննդ. ԼԲ 28): Իսրայել անունն Աստծո ժողովրդի ինքնության բանալին է՝ մշտական պայքար՝ աստվածային օրհնությամբ:

ՄՈՎՍԵՍ – «ՋՐԻՑ ՀԱՆՎԱԾ»

«Որովհետև ջրից հանեցի նրան» (Ելք Բ 10): Մովսես անունը նախանշում է նրա առաքելությունը՝ ժողովրդին դուրս հանել մեղքի և գերության ջրերից:

Աշխարհագրությունը խոսում է

Սուրբ Գրքում տեղանունները երբեք զուտ աշխարհագրական նշումներ չեն: Դրանք գրեթե միշտ կրում են աստվածաբանական իմաստ՝ հաճախ դառնալով մի ամբողջ հոգևոր իրականության, պատմական շրջանի կամ մարդկային վիճակի խորհրդանիշ: Ինչպես անձնանունը մեկ բառով բնութագրում է մարդուն, այնպես էլ տեղանունը մեկ բառով հատկորոշում է այն, ինչ այնտեղ տեղի է ունենում, կամ ինչպիսի հոգևոր մթնոլորտ է տիրում: Այդ պատճառով Աստվածաշնչում տեղանունը հաճախ հանդես է գալիս որպես հոգևոր քարտեզ, որի միջոցով բացահայտվում է մարդու հարաբերությունն Աստծո հետ: Շատ դեպքերում տեղանունը դառնում է պատմության մեկնաբանական բանալի՝ բացատրելով ոչ միայն «որտեղ»-ը, այլև հատկապես «ինչու»-ն:

Եդեմ – Աստծո ներկայության և մարդու սկզբնական կոչման վայրը

Եդեմ անունը նշանակում է «վայելչություն», «բերկրանք», «հաճույք»: Սա արդեն ինքնին ցույց է տալիս, որ Եդեմը պարզապես պարտեզ չէր, այլ մարդու և Աստծո կենդանի հաղորդակցության տարածք: «Եվ Տեր Աստված Եդեմում դրեց մարդուն» (Ծննդ. Բ 8) խոսքը ցույց է տալիս, որ մարդու կոչումն սկզբնապես կապված էր Աստծո ներկայության հետ: Սակայն Եդեմը նաև դառնում է մարդու անկման վայրը, երբ նույն այդ բերկրանքի տեղը վերածվում է արտաքսման հիշողության. «Ուստի Տեր Աստված դուրս արեց նրան Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որտեղից առնվել էր: Եվ արտաքսեց Ադամին և Եդեմի պարտեզի դիմացը դրեց Քերովբեներին....» (Ծննդ. Գ 23–24): Այսպիսով՝ Եդեմը տիպաբանորեն նկարագրում է մարդու ազատ կամքի փորձությունը. նույն տեղը կարող է լինել թե դրախտ, թե կորուստ: Եդեմը չի պարտադրում մեղք, այլ բացահայտում է մարդու ընտրությունը:

Բաբելոն – խառնակության և աստվածազուրկ միավորման խորհրդանիշ

Բաբելոն անունը Սուրբ Գրքում ստանում է խիստ տիպաբանական նշանակություն: «Այնտեղ Տերը խառնեց մարդկանց լեզուները» (Ծննդ. ԺԱ 9), և հենց այդտեղից էլ բխում է անվան խորհրդանշական իմաստը՝ խառնակություն: Սակայն Բաբելոնը պարզապես լեզվական խառնաշփոթ չէ: Այն դառնում է մարդու փորձը՝ Աստծուց անկախ՝ բարձրանալու և ինքն իրեն աստվածացնելու: Այդ պատճառով Հայտնության գրքում Բաբելոնը կրկին հայտնվում է որպես ամբողջ համակարգ՝ հակադրված Աստծո թագավորությանը (Հայտն. ԺՋ–ԺԷ): Այստեղ տեղանունը վերածվում է հոգևոր վիճակի անվան, որը կարող է կրկնվել ցանկացած ժամանակ և վայրում:

Եգիպտոս – գերության, բայց նաև ձևավորման վայրը

Եգիպտոսը Սուրբ Գրքում ներկայացվում է երկակի կերպով: Մի կողմից այն ապաստան է սովի ժամանակ (Ծննդ. ԽԱ 57), մյուս կողմից՝ դաժան գերության վայր (Ելք Ա 13–14): «Եգիպտոսից դուրս բերեցի իմ որդուն» (Օսեե ԺԱ 1) խոսքը հետագայում տիպաբանորեն կիրառվում է Քրիստոսի դեպքում. «Նա այնտեղ մնաց մինչև Հերովդեսի վախճանը, որպեսզի իրականանար Տիրոջ կողմից մարգարեի միջոցով ասվածը. Եգիպտոսից իմ որդուն կանչեցի» (Մատթ. Բ 15, հմմտ. Օսեե ԺԱ 1): Այսպիսով՝ Եգիպտոսը դառնում է մարդու կյանքի այն փուլը, երբ նա կամ կախվածության մեջ է ընկնում, կամ պատրաստվում ազատությանը: Տեղանունը չի դատապարտում, այլ բացահայտում է ճանապարհի մի հանգրվան: Եգիպտոսը չի սահմանում վերջնական վիճակ, այլ անցումային փուլ է դեպի խոստում:

Սիոն և Երուսաղեմ – Աստծո բնակության և ժողովրդի ինքնության խորհրդանիշը

Սիոնը և Երուսաղեմը Աստվածաշնչում քաղաքից վեր են անցնում շատ ավելի մեծ իրականության: «Սիոնից օրենք պիտի ելնի» (Ես. Բ 3) խոսքը ցույց է տալիս, որ սա Աստծո հայտնության կենտրոնն է: Սակայն նույն Երուսաղեմն է, որ մերժում է մարգարեներին. «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ կոտորում ես մարգարեներին, քարկոծում քեզ մոտ ուղարկվածներին....» (Մատթ. ԻԳ 37): Այս երկակիությունը կարևոր է. տեղանունը սուրբ է իր կոչմամբ, բայց կարող է դառնալ դատաստանի վայր՝ ժողովրդի ընտրության պատճառով: ➥ *էջ 8*

Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանցի ուղեգրության մեջ

կյանքից դուրս զբաղվածության մասին: Մայր Աթոռի գանձապետն էր հայր Թադեոս Զյունականը. «Այր հիւրասէր՝ և ըստ չափու գիտնական» (էջ 75): Շտեմարանի կառավարիչը հայր Ադամն էր, նա նաև միաբանական սեղանատան պատասխանատուն էր: Իսկ զվարճախոս Ռափայել վարդապետն զբաղեցնում էր գոմապետի պաշտոնը: Վարդապետների մեջ աչքի էր ընկնում հայր Գրիգոր Աղափիրյանը, որ տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների. «Իւր պէս հմուտ կարծեմ Սուրբ Գահն թէ չկայ» (էջ 80): Ծերունազարդ հայր Հովսեփ Բժիշկյանի մասին գրում է. «Է այր ընտիր՝ և երաժիշտ քաղցրաբան» (էջ 80), իսկ Հարություն վարդապետ Վարդազարյանը «....ժամ օրհնողի պաշտօն վարէ հոգւով սերտ» (էջ 80): Հայր Հովհաննես Արշարունու մասին գրում է, որ ծախսարար էր:

Այս ուղեգրությունը նաև կարևոր տեղեկություններ է հաղորդում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի քանի շենքերի ու շինությունների մասին: Տեղագրությունն ու նկարագրությունն ամբողջական չեն. հեղինակը նշում է, որ ժամանակը սուղ էր՝ մի առ մի բոլորի մասին հիշատակելու, սակայն հորդորում է Մայր Աթոռի վանաբնակ միաբաններին՝ հանձն առնել այդ կարևոր և պատասխանատու գործը. «Եւ չեմ լինիր տէր իրաւանց ուրիշի, այս իրաւունք է Սուրբ Գահի րաբունեաց, թէ կամք անեն՝ յինէն գրեն գերազանց» (էջ 78):

Մայր Տաճարը վանքի կենտրոնում էր և «իւր կից չունի այլ շինութիւն» (էջ 74): Տաճարի հիմնադրման ու կառուցման պատմությունը շարադրելիս մեծ ոգևորությամբ ի լուր ամենքի գրում է. «Երկրիս վրան չկայ Աթոռ մ'իւր նման, որ Տէրն լինի ճարտարապետ իւր շինման: Թող համարձակ պարծենայ Հայն այս մասին» (էջ 68): Տաճարի զանգակատունն իր շքեղությամբ զարմացրել ու հիացրել էր ուխտավոր վարդապետին. «Զանգակատան նման պարթև շէնք իսկի, դեռ կենացս մէջ ուրիշ մի վանք չտեսի: Քանի դար է անցեր վրան, գիտես, թէ վարպետ մէջէն նոր աւարտեալ ելեր է» (էջ 69): Տաճարը չորս կողմից շրջապատված էր ծաղիկներով ու ծառերով, որ ջրվում էին Տաճարի արևմտյան կողմից բխող աղբյուրից:

Տաճարի արևմտյան կողմում էր Հայոց Հայրապետի կեցավայրը՝ Վեհարանը: Այն կառուցել էր Ղազար Ա Ջահկեցի Կաթողիկոսը. «....շինութիւն է քարուկիր տաշածու, բայց ճաշակաւ Պարսից կերտեալ» (էջ 74): Հեղինակը Վեհարանի սենյակների զարդերի ու հարդարանքի մասին գրում է, որ հյուր լինելով՝ մի առ մի չի կարող ներկայացնել. «Մեր գովեստէն գեր ի վերոյ կտեսնանք» (էջ 75):

Պարտեզի արևմտյան կողմում էր գտնվում Սիոնդի նորակառույց շենքը, որտեղ էլ գավառներից առաջադրված խնդիրներն ըստ կարգի լուծում էին գտնում: Սիոնդի շենքում Ռուսաց կայսեր պատկերը կար. «Յոն ներս մտնող պէտք է կարծէ կայսր ներկայ» (էջ 75): Վեհարանի հարևանությամբ էր գտնվում այն շենքը, որտեղ նստում էր գանձապահը:

Ապա հեղինակը մեծ ոգևորությամբ ներկայացնում է Մայր Աթոռի թանգարանը. «Սորա նման ճոխ թանգարան ինձ թուի, ո՛չ Վենետիկ և ո՛չ Սաղիմ գտանի» (էջ 76): Թանգարանի հիմնադրման գործում մեծ ներդրում էր ունեցել հանգուցյալ Շահխաթունյան սրբազանը, նրան հաջորդել է Շահնազարյան րաբունին, իսկ թանգարանի պատասխանատուն էր ուսումնասեր հայր Վրթանես Մանուկյանը: Մայր Աթոռում այդ օրերին պահվում էին երեք հազարից ավելի ձեռագիր մատյաններ, ինչպես նաև տպագիր գրքեր՝ «հայ և օտար լեզուաւ ամէնքը հատընտիր» (էջ 76):

Մայր Աթոռում պահվող գանձերի մասին Ղևոնդ վարդապետը խուսափում է մանրամասն տեղեկություններ հաղորդելուց՝ պատճառաբանելով, որ իրեն մի մեծ մատյան էր պետք՝ այդ բոլորի մասին գրելու: Գանձերի ու սրբությունների վերաբերյալ տալիս է կարճ, բայց հիացական տեղեկություն. «Յոյժ թանկագին ոսկիահիւս նոր շուրջառք, տեսի կան շատ սկիհ՝ մասունք և բուրվառք, այն հատընտիր անօթեղէնք Տաճարին, ըստոյգ աչկունք կշրտեցնեն աշողին» (էջ 72):

Վանքի արևելյան կողմում էր գտնվում ժառանգավորաց դպրոցը, ուր ուսանում էին շուրջ հիսուն աշակերտներ: Սաների հոգևոր հայրն ու ուսուցչապետը Գրիգոր վարդապետ Գառնակերյանն էր. «Սինօթէն զատ իշխել չկարէ վրան ոք» (էջ 76): Նա էր դպրոցի կարգ ու կանոնի պատասխանատուն: Սաները, հայերենից զատ, սովորում էին նաև ռուսերեն: Նրանք մասնակցում էին ժամերգություններին, ապա գնում էին սեղանատուն և միաբանների հետ հացի սեղան նստում: Հացից հետո վերադառնում են դպրոց, և յուրաքանչյուրն անցնում էր դասերը սերտելուն, որից հետո էլ գնում էին ննջարան՝ քնելու: Հեղինակը գրում է, որ աշակերտների մեծ մասը խեղճ էր, իսկ առաջադեմ և աշխույժ աշակերտները քիչ էին:

Շտեմարանն ու տպարանը գտնվում էին վանքի հարավային կողմում: Վանքի տարածքում կար երկու ճաշարան. մեկը՝ ձմեռվա համար, մյուսը՝ տաք օրերի: Միաբանները, դեմ դիմաց նստելով, լռակյաց վայելում էին իրենց մատուցված ուտելիքը: Նրանց ընկերակից էին դառնում նաև տարբեր վայրերից Մայր Աթոռ եկած ուխտավորները:

Վանքի հյուսիսային կողմում էին գտնվում միաբանական խցերը՝ վարդապետների ու աբեղաների համար: Խցերը միահարկ էին ու խոնավ. «Խեղճ միաբանք վիշտ կրեն մէջ ոչ սակաւ» (էջ 78): Սրբազան հայրերի սենյակներն ավելի բարվոք վիճակում էին. նրանք բնակվում էին վերնահարկերում: Այնուհետև ներկայացնում է Ղազար Ջահկեցի Կաթողիկոսի կառուցած շենքը ուխտավորների համար, որը նրա անունով կոչվում էր Ղազարապատ: Այն երկհարկանի շենք էր՝ մոտ քսան սենյակով: Այդ օրերին հյուրընկալի պաշտոնը վարում էր եղիշե վարդապետ Ամատունին, սակայն վերջինիս հիվանդության պատճառով հետո այդ պաշտոնը վստահվեց հայր Հակոբոսին:

Ղևոնդ Տոսպեցին հիշատակում է նաև Սուրբ Շողակաթ, Սուրբ Հռիփսիմե և Սուրբ Գայանե վանքերը՝ տալով վանահայրերի անունները՝ Գևորգ, Ստեփան և Ղազար: Թվարկում է Սուրբ Գայանե վանքի գավթում ամփոփված Հայրապետներին՝ Ղուկաս Ա Կարնեցի, Մինաս Ա Ակնեցի, Դավիթ Ե Էնեգեթցի Ղորղանյան, Սիմեոն Ա Երևանցի, Հակոբ Ե Շամախեցի, Ղազար Ա Ջահկեցի, ինչպես նաև ընտրված, բայց չօծված Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին: Գայանե վանքին կից էին Ներսես Ե Աշտարակեցու օրոք տնկված արհեստական անտառն ու լիճը. «Չորս շիներ է հանգուցեալ Մեծ Վեհափառ, սոքօք անմահ մնայ Ներսէս Հինգերորդ» (էջ 82): Գայանե վանքին մոտ էր նաև միաբանական գերեզմանատունը. «Ուր կան ի քուն շատ կղեր և միաբան, եպիսկոպոսք՝ ճոխ, վարդապետք՝ հատընտիր» (էջ 82): Այստեղ են ամփոփված պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Ա Զորագեղցին, որի գերեզմանի վրա «....կայ այժմ գմբէթ պատուական» (էջ 82):

Ղևոնդ վարդապետի ուղեգրությունը հետաքրքիր հիշատակարան է 19-րդ դարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասին որոշակի պատկերացում կազմելու համար:

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմության խորհուրդը

Աստծունն է զորությունը, Քոնն է, Տե՛ր, ողորմությունը,
Դու ես հատուցում յուրաքանչյուրին՝ ըստ իր գործերի
(Սաղմ. 61.13):

Պատմության խորհուրդ կամ իմաստ ասելով՝ նկատի ունենք մարդկության պատմության կամ մի առանձին ժողովրդի բախտորոշ իրադարձությունների էությունը, այդ իրադարձությունների պատճառահետևանքային կապերը՝ պարզելու՝ արդյո՞ք տրամաբանական է այդ ամենը, արդյո՞ք դրանք անհրաժեշտաբար են իրականացվում, թե՞ պատահականության քմահաճույքին են մատնված:

Ժամանակի ընթացքում ստեղծվել են պատմագիտական տարբեր դպրոցներ, որոնք լուսաբանել են մարդկության պատմությունն էվոլյուցիոն, հոգևոր, մատերիալիստական, տեխնոլոգիական, դետերմինիստական և այլ ուսմունքների տեսանկյունից: Դրանք բոլորն էլ, սակայն, որքան էլ գրավիչ լինեն, ի զորու չեն մարդկության պատմության ամբողջական պատկերը տալու, բացատրելու նրա անսպասելի վերելքների և անկումների խորհուրդը, զարգացման օրինաչափություններն ու տրամաբանությունը:

Քրիստոնեական-հայրաբանական, ինչպես նաև հրեական և մահմեդական պատմագիտության ուսմունքների համաձայն՝ պատմությունը դիտարկվում է աստվածային նախախնամության տեսակետի ներքո, ընդգծվում Աստծո անմիջական և մշտական մասնակցությունը պատմական իրադարձություններին, Նրա՝ մարդկության նկատմամբ հոգատարությունն ու տիեզերքի պահպանությունը, այնպես որ Աստված, ըստ դրանց, ոչ միայն բացարձակ իմաստով տիեզերքի, մարդկության, այլև պատմության Տերն է: Պողոս առաքյալն ասում է. «Աստված, որ ստեղծեց այս աշխարհը և այն ամենը, որ նրա մեջ կա, Նա՛ է Տերը երկնքի և երկրի... Նա՛ է տալիս ամեն բանի կյանք և շունչ և ամեն ինչ: Մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն ամբողջ երկրի վրա, հաստատեց նախակարգյալ ժամանակները և դրեց նրանց բնակության սահմանները, որ փնտրեն Աստծուն ու խարխափելով թերևս գտնեն Նրան. թեև Նա մեզնից յուրաքանչյուրիցս հեռու չէ, քանի որ նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք 17.24–28):

Մենք պատմության իմաստը լիարժեք և սպառիչ կերպով կգտնենք Աստվածաշունչ մատյանում՝ մասնավորապես «Երկրորդ օրինաց» գրքում: Ըստ այս աստվածային գրքի՝ մեր կյանքը կայանում է մեր ազատ կամքի ընտրությամբ. «Այսօր, ահա, քո առջևն եմ դնում կյանքն ու մահը, բարին ու չարը: Եթե լսես մեր Տեր Աստծո պատվիրանները, որ ես այսօր պատգամում եմ քեզ, սիրես քո Տեր Աստծուն, ընթանաս Նրա ճանապարհներով, պահես Նրա օրենքները, Նրա պատվիրաններն ու Նրա կանոնները, կապրեք և բազմամարդ կլինեք, և քո Տեր Աստվածը քեզ կօրհնի ամբողջ երկրում, ուր կմտնես այն ժառանգելու համար: Երդվում եմ ձեզ երկնքով ու երկրով, որ ձեր առջևն եմ դնում կյանքն ու մահը, օրհնություններն ու անեծքները: Ընտրիր կյանքը, որպեսզի ապրեք դու և քո սերունդը» (Բ Օր. 30.15,16, 19):

Մարդու առաջ բացված են երկու հակոտնյա՝ բարօրության ու երջանկության և ըմբոստության ու անվերջանալի դժբախտությունների ճանապարհներ: Մարդը կամ հասարակությունը և կամ ազգը սերնդեսերունդ իր իսկ ազատ կամքով պիտի ընտրություն կատարի և ըստ այդմ էլ՝ կերտի իր ճակատագիրը:

Սինա լեռից՝ մարդկության բարոյականության և արժանապատվության բնօրրանից, որտեղ Մովսես մարգարեն Աստծուց ստացավ օրենքները, հնչեցին նաև բոլոր ժամանակներին ուղղված օրհնություններ՝ այդ արդար օրենքներով ընթացողների, և անեծքներ՝ օրինազանցների և ըմբոստների համար. «Եթե ենթարկվես այս բոլոր օրենքներին և պահես ու գործադրես դրանք, ապա Տեր Աստվածը կկատարի Իր արած ուխտն ու ողորմածությունը» (Բ Օր. 7.12): «Հողն իր բերքը կտա, իսկ դաշտերի ծառերը կտան իրենց պտուղները: Դուք կուշտ հաց կուտեք և ձեր երկրում անհոգ կապրեք: Ձեր երկրին խաղաղություն կպարգևեմ, և ձեր երկրում պատերազմ չի լինի: Կքնեք, և չի լինի մեկը, որ ձեզ վախեցնի: Ես բարի աչքով կնայեմ ձեզ, կաճեցնեմ և կբազմացնեմ ձեզ (Ղևտ. 26.4, 5, 6, 9): «Պաշտի՛ր քո Տեր Աստծուն, և Ես կօրհնեմ քո հացն ու ջուրը և ձեզանից կվանեմ հիվանդությունները» (Ելք 23.25): «Եթե լսես քո Տեր Աստծո պատվիրանները, որ պահելու և կատարելու համար հաղորդում եմ քեզ այսօր, ապա բազում ազգերի վրա կիշխես, բայց քեզ վրա չեն իշխի: Քո Տեր Աստվածը քեղ կդարձնի գլուխ, բայց ոչ պոչ, բարձր կլինես և ոչ թե՝ ցած» (Բ Օր. 28.13):

«Բ Օրինաց» և «Ղևտական» գրքերում անեծքների մի քանի ցանկեր կան, որոնք վերաբերում են կռապաշտության ամենայն դրսևորմանը, հայր և մայր անարգողներին, այրու, որբի, անպաշտպան խավի իրավունքները խախտողներին, անբնական սեռական կապերին, նենգաբար անմեղ արյուն թափողներին (Բ Օր. 27.11–26): Մյուս ցանկերը (Ղևտ. 26.14–26, Բ Օր. 28.15–68) Աստծո սուրբ պատվիրանները (Ելք 20–31) կատարելու մերժմանն են վերաբերում և բնորոշվում որպես անհնազանդություն կամ ըմբոստություն Արարչի դեմ: Այդ անեծքները, ինչպես օրհնությունների պարագայում, նույնպես կարելի է խմբավորել՝ ամլություն, հիվանդություններ, աղքատություն, անհաջողություն, ռազմական պարտություն և այլն: Ընդ որում՝ այս արդար պատիժները, որոնք սթափեցնելու խորհուրդ ունեն, անտեսվելիս էլ ավելի կխստացվեն, այն էլ՝ կրկնվելու հեռանկարով. «Եթե նման պատիժներից հետո էլ Ինձ չլսեք, ձեր գործած մեղքերի համար յոթնապատիկ ավելի պիտի պատժեմ: Ես պիտի խորտակեմ ձեր ամբարտավան պարծենկոտությունը, երկինքը ձեզ վրա երկաթի պես ծանր պիտի դարձնեմ, իսկ ձեր հողը՝ պղնձի պես կարծր: Ձեր քաղաքները ավերակ պիտի դարձնեմ, պիտի ամայացնեմ ձեր սրբարանները և ձեր զոհաբերությունների անուշ բույրը այլևս չպիտի հոտոտեմ: Ձեզ պիտի ցրեմ տարբեր ժողովուրդների մեջ... Ձեր երկիրը ավերակ պիտի դառնա, իսկ ձեր քաղաքները՝ ամայի: Դուք պիտի կորչեք ժողովուրդների մեջ, և ձեր թշնամիների երկիրը ձեզ կուլ պիտի տա» (Ղևտ.26.19, 23–24, 27, 31, 33, 38, տես նաև Բ Օր.15–68): «Տերը քեզ աղքատ ու կարիքավոր կդարձնի և ձեռնարկած ու ձեռնարկելիք բոլոր գործերդ անհաջողության կմատնի» (Բ Օր. 28.20, տես նաև Սաղմ. 1.3): Ի դեպ, այստեղից էլ աշխարհի բոլոր լեզուներում տարածված «անհաջողակ» կամ «ձախորդ» բառերի բուն կրոնական իմաստը:

Բացի վերոբերյալ գրքերից՝ Սուրբ Գրքում բազում այլ նույնաբնույթ նախազգուշացումներ էլ կան: Այսպես՝ անեծքի ենթակա է այն մարդը, որ «Իր հույսը կդնի մարդու վրա՝ ապավինելով նրա մարմնին և բազկին, իսկ նրա սիրտը կապստամբի Տիրոջ դեմ» (Երեմ. 17.5): «Ո՛ւյս մի դրեք իշխանների՝ մարդկանց որդիների վրա, որովհետև նրանցից փրկություն չկա: Երբ դուրս գա նրանց հոգին, նրանք կրկին հող կդառնան, և նույն օրը նրանց բոլոր մտածումները կանհետանան» (Սաղմ. 145.4): «Ահավասիկ Զորությունների Տեր Աստվածը Հրեաստանից և Երուսաղեմից պիտի վերացնի հզոր տղամարդուն և զորավոր կնոջը, հացի զորությունը և ջրի զորությունը, հսկային, զորեղին և քաջամարտիկին, դատավորին, մարգարեին, քննիչին և ծերին, հիսնապետին և սքանչելի խորհրդականին, իմաստուն ճարտարապետին և խելամիտ ատենակալին: Նրանց վրա իշխան պիտի կարգեմ մանուկներին, խաբեբաները պիտի տիրեն նրանց» (Ես. 3.1–4):

Զաքարիա մարգարեին երևացած թռչող գերանդու տեսիլքի խորհուրդն այսպես է բացատրում հրեշտակը. «Դա այն անեծքն է, որ տարածվում է ամբողջ երկրի երեսին, որովհետև ամեն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործվի, և դրանով պիտի լինի բոլոր նրանց մահացու վրեժը, ովքեր սուտ են երդվում»: «Ես պիտի հանեմ դա,– ասում է ամենակալ Տերը,– և այն պիտի մտնի գողերի տունը և նրանց տունը, որոնք սուտ երդում են անում Իմ անունով. պիտի մնա նրանց տանը և պիտի սպառի այն, նրա փայտն ու քարերը» (Զաք. 5.3–4):

Աստվածաշնչի առաջին հինգ՝ օրենսդրական կոչվող գրքերին հաջորդում են պատմական 18 գրքերը՝ ժամանակագրորեն ընդգրկելով մի մեծ ժամանակահատված՝ Ք. ա. մոտ 1500 թ. Հեսու Նավեի գլխավորությամբ Պաղեստինի գրավումից հասնելով մինչև Ք. ա. 2-րդ դարը՝ մակաբայեցիների հերոսական պայքարը՝ հանուն հավատի և հայրենիքի: Եթե օրենսդրական գրքերի խնդրո առարկան օրենքն է (թվով 613, ընդ որում՝ 365-ը հանձնառական, իսկ 248-ը՝ հրաժարական՝ «մի՛» ժխտական մասնիկի գործածմամբ), Աստծո կոչն առ հնազանդություն և ի սրտե պատվիրանապահություն, ապա պատմականները պարունակում են բովանդակ ժողովրդի՝ այդ կոչի արձագանքը իրական դեպքերի և անցքերի մեջ՝ հետևանքներով հանդերձ: Այդ գրքերի արժանահավատությունը, հավաստիությունն ու հարազատությունը կասկածի տեղիք չեն տալիս, ինչպես փաստում է հնագիտությունը՝ Իսրայելի և դրացի ժողովուրդների պեղումներից կորզած նյութական հետքերի և պեղածո վիմագիր արձանագրությունների հիմամբ: Պատմական գրքերը կարդացվում են մի շնչով և դաս ու խրատ քաղելու անսպառ աղբյուր են նրանց համար, ովքեր ուզում են Իսրայելի օրինակով տեսնել Աստծո և մարդկության միջև այդ՝ երկուստեք պարտավորություններով Ուխտի կատարումը պատմության մեջ, որը տարածվում է բոլոր ժողովուրդների, սերունդների և ժամանակների վրա:

Դեպքերի, իրադարձությունների և առհասարակ սուրբգրային եղելությունների անընտգյուտ նկարագրություններից ոչ պակաս կարևոր է, ըստ սրբազան հեղինակների, դրանց խորհրդի բացահայտումը, որն էլ հենց պատմության իմաստն է, իսկ մերօրյա եզրաբանությամբ՝ պատմության փիլիսոփայությունը կամ աստվածաբանությունը: Դրանք, իբրև այդպիսիք, որքան էլ Աստվածաշնչում ազգային և տեղական գունավորում ունենան, սահմանափակված չեն ո՛չ տեղով, ո՛չ ժամանակով և խորհուրդ ունեն բոլոր դարերի համար: Պողոս առաքյալը հանրագումարային իմաստ հաղորդում հինկտակարանյան բոլոր եղելություններին՝ ասելով. «Որպես խրատ գրվեցին մեզ համար»: Հետևաբար՝ մեզ համար էլ նշանակալիցը Աստծո՝ պատմության Տիրոջ անվերջանալի միջամտությունների ընկալումն ու գիտակցումն են, ինչպես վկայում է 66-րդ սաղմոսը.

«Դու արդարությամբ ես դատում ժողովուրդներին
և երկրի ազգերին Դու ես առաջնորդում:
Թող ժողովուրդները Քեզ օրհնաբանեն, Աստվա՛ծ,
թող գոհություն մատուցեն Քեզ բոլոր ժողովուրդները:
Եկիրը տվեց իր պտուղը,
և Աստված, Աստվածը մեր, օրհնեց մեզ:
Մեր Աստվածը պիտի օրհնի մեզ,
և երկրի բոլոր ծագերում պիտի
սոսկան Նրանից»:

Հաճախ կարելի է հանդիպել հրեաների և հայերի պատմությունների միջև զուգահեռներ անցկացնելու կամ դրանք նույնացնելու իրողությանը: Ժամանակակից հրեությունն սկսել է ձևավորվել բաբելոնյան 70-ամյա գերությունից հետո, երբ, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը, իրենց նախնիների և իրենց իսկ մեղքերի հետևանքով մատնվեցին ազգային աղետալի կացության, խռովահույզ և փոթորկոտ շրջանների՝ սուր և անկեղծ ապրումներով, գիտակցմամբ և ապաշխարությամբ ուղեկցվող:

Այսօր մեզ՝ հայերիս, առավել, քան երբևէ, կարևոր է հասկանալ այն իրողությունները, որոնք՝ իբրև ամենայնի նախապատճառ, թեև տեսանելի չեն, բայց, անտարակույս, պատմության ընթացքը ղեկավարող ներգործություններ են: Քիչ չեն նրանք, ովքեր համարում են, որ մեր երկրի քաղաքական, տնտեսական և բարոյահոգեբանական խոր ճգնաժամի բուն պատճառը աշխարհագրական դիրքն է, մեր՝ անբարենպաստ քաղաքակրթությունների խաչմերուկում լինելը, սխալ դիվանագիտությունը, մեր վաղեմի բարեկամները, բայց ոչ բնավ մարդը, Եկեղեցու և Աստծո դեմ գործած մեղքերը, ոչ սեփական անձը, արծաթասիրությունը, կյանքի իմաստը վայելքներով անցկացնելը, առանց Աստծո առաջնորդությունը փնտրելու, իրենց խելքին ու կամքին ապավինած՝ կարևորագույն, բախտորոշ հարցեր լուծելու փորձերը՝ նորից ու կրկին սխալվելով և կրկին ու նորից հետևություններ չանելով: ➥ *էջ 8*

Սուրբ Հովհաննես Մկրտիչ...

➥ *էջ 4*

Փրկչի մասին վկայություն տալուց հետո Հովհաննես Մկրտչին բանտարկում են. «Բայց Հերովդես չորրորդապետը, հանդիմանված լինելով Հովհաննեսի կողմից, իր եղբոր կնոջ՝ Հերովդիայի պատճառով և այն բոլոր չարիքների համար, որ Հերովդեսը գործել էր, այդ բոլորի վրա ավելացրեց և այն, որ Հովհաննեսին բանտարկեց» (Ղուկ. Գ 19–20): Թեև Ավետարանները չեն նշում բանտարկության վայրը, բայց Հովսեփոս պատմիչը հստակ տալիս է սահմանամերձ Մաքերոն ամրոցի անունը:

Մկրտչի ճշմարտախոս ընթացքը ոխով է լցնում Հերովդիայի սիրտը, և նա ճանապարհներ է որոնում՝ սպանելու մարգարեին: Ի վերջո, հարմար առիթն ընձեռվում է. «Սակայն մի հարմար օր եկավ, երբ Հերովդեսն իր ծննդյան տարեդարձի առթիվ ընթրիք էր տալիս իր նախարարներին, հազարապետներին և Գալիլեայի մեծամեծներին: Երբ Հերովդիայի դուստրը ներս մտավ և սկսեց պարել, դուր եկավ Հերովդեսին ու սեղանակիցներին: Թագավորն աղջկան ասաց. «Ուզի՛ր ինձնից, ինչ որ կամենում ես, և կտամ քեզ»: Եվ երդվեց նրան շատ անգամ, թե՝ «Դու ինչ էլ ուզես ինձնից, կտամ քեզ, մինչև իսկ իմ թագավորության կեսը»: Աղջիկը դուրս ելավ և իր մորը հարցրեց. «Ի՞նչ ուզեմ»: Մայրն ասաց. «Հովհաննես Մկրտչի գլուխը»: Շուտափույթ կրկին թագավորի մոտ մտնելով՝ աղջիկն ասաց. «Ուզում եմ, որ հիմա սկուտեղի վրա անմիջապես ինձ տաս Հովհաննես Մկրտչի գլուխը»: Թագավորը սաստիկ տրտմեց, բայց հրավիրվածների առջև տրված իր երդումների պատճառով չկարողացավ նրան մերժել: Թագավորն իսկույն դահիճ ուղարկեց և հրամայեց բերել Հովհաննեսի գլուխը: Դահիճը գնաց, բանտում գլխատեց Հովհաննեսին և նրա գլուխն սկուտեղի վրա բերեց ու տվեց աղջկան, իսկ աղջիկն էլ տարավ տվեց իր մորը: Երբ Հովհաննեսի աշակերտները լսեցին, եկան վերցրին նրա մարմինը և դրեցին մի գերեզմանի մեջ» (Մարկ. Զ 21–29): Այսպես՝ Մարկոսի Ավետարանում Հովհաննես Մկրտիչը ներկայացվում է որպես ծածուկ կերպով գործող եղիա, որի տառապանքները նախապատրաստում են Տիրոջ ճանապարհը և իբրև օրինակ են ծառայում հալածյալ քրիստոնյաների համար: Արդարև, նրա նահատակությունը վկայում է, որ ճշմարտությունը սոսկ արտաբերված քարոզ չէ, այլ կյանքի գին: Ի վերջո նա մնում է ոչ միայն մարգարե և վկա, այլև նախակարապետ նահատակների: Պատահական չէ, որ Ատոմ Անձևացին Մկրտչին կոչում է «Նահատակների պետ»:

Հովհաննես Մկրտչի օրինակը քրիստոնյաներին մշտամնա հիշեցնում է, որ աստվածահաճո կյանքն սկսվում է ապաշխարությունից, շարունակվում խոնարհությամբ և ավարտվում ճշմարտության վկայությամբ: Դրա համար էլ շարականագիրը նրան բնորոշում է «ճշմարտության ճրագ» կոչմամբ: Մկրտչի ձայնը մինչև այսօր հնչում է եկեղեցում՝ ոչ որպես ինքնաբացահայտող ելևէջ, այլ աղաղակ. «Ահա՛ Նա»:

Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ելենա ՂԱԼԱԽԱՆՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան. ***Դրոշմի Խորհուրդի մասին***

Դրոշմը մկրտուողներուն հաստատութեան կնիքն է, որ սրբալոյս Միւռոնով կը կնքուի մկրտուողին ճակատը՝ նշանաւոր զինուոր ըլլալու համար Քրիստոսի եւ զանազանուելու անհաւատներէն: Քանի որ այս խորհուրդը ճակատին կը տրուի, որ ամօթխածութեան տեղն է: Տակաւին, այս խորհուրդը կը վերցնէ ամօթը, որպէսզի Քրիստոսի հաւատքը համարձակօրէն դաւանինք:

Երկրորդ՝ որովհետեւ Քրիստոսի մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգին աղաւնակերպ երեւցաւ, որ կը ծանուցէր դրոշմին խորհուրդը. նաեւ, նոյն Հոգիով անապատ առաջնորդուեցաւ՝ սատանային դէմ պատերազմելու համար: Այդպէս ալ այս խորհուրդը մեզի Միւռոնով կը տրուի եւ կարողութիւն կու տայ պատերազմելու աշխարհին, մարմինին ու սատանային դէմ:

Երրորդ՝ Քրիստոսի մկրտուելուն ժամանակ թէեւ Հայրը կը վկայէ, թէ՝ ա՛յս է Իմ սիրելի Որդիս, սակայն Սուրբ Հոգին Անոր վրայ իջաւ՝ Հօր Աստուծոյ վկայութիւնը հաստատելու համար: Այդպէս ալ մեր մկրտուելուն ժամանակ. թէեւ Աստուծոյ որդիներ կ'ըլլանք, սակայն Սուրբ Հոգին է, որ կը սորվեցնէ մեզի զԱստուած Աբբա, Հայր կոչել, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը [տես Գաղատ. 4.6]:

Չորրորդ՝ այս խորհուրդով մեր մէջ կը հաստատուի մկրտութեան շնորհքը, ինչպէս Դաւիթ մարգարէն կ'ըսէ, թէ՝ հաստատէ՛, ո՛վ Աստուած, ասիկա, որ մեր մէջ գործեցիր մկրտութեան ժամանակ (նման միտքով արտայայտութիւն չունի Դաւիթ մարգարէն: Նալեան Պատրիարքի մատնանշածը թերեւս Սաղմոս 89.17-րդ համարն է, ուր կը կարդանք. «Տէր Աստուծոյ լոյսը թող մեր վրայ իջնէ. ուղղէ՛ մեր ձեռքին գործերը, Տէ՛ր, մեր ձեռքին գործերը յաջողցո՛ւր մեզի»):

Հինգերորդ՝ մարդս Քրիստոսի համար հոգեւոր զինուոր կ'ընէ, որովհետեւ ինչպէս ըմբշամարտները իւղով կ'օծուին, որպէսզի թշնամիին կողմէ չբռնուին, այդպէս ալ մկրտուածները կը դրոշմուին, որպէսզի սատանայէն չբռնուին:

Վեցերորդ՝ այս խորհուրդը կը զարդարէ մարդս ներքին եւ արտաքին գեղեցկութեամբ. ներքնապէս՝ մաքուր խղճմտանքով, իսկ արտաքնապէս՝ բարի համբաւի անուշահոտ բուրմունքով. ասիկա կը ցուցնէ Միւռոնը, որ կը սրբագործուի ձիթենիի ձէթով, բալասանոց, քանի որ ձիթենիին ձէթը լուսաւոր է, իսկ բալասանը՝ անուշահոտ: Եւ թէեւ Միւռոնին հետ բազմաթիւ ծաղիկներ կը խառնուին, սակայն կարեւորն ու անհրաժեշտը այս երկուքն են. իսկ միւս ծաղիկները վայելչական են:

Եօթերորդ՝ այս խորհուրդը կը զօրացնէ մարդուն բարիք գործելու եւ չարին յաղթելու՝ Սուրբ Հոգիին շնորհքով:

Ութերորդ՝ հոգին կը սպառազինէ կնքիով, իսկ մարմինը՝ խաչին նշանով: Հոգիին վրայ դրուած կնիքը երկչոտութիւնը կը վերացնէ, իսկ մարմինինը դիւական երեւումները կը հալածէ:

Ով որ դրոշմի նշանով կը կնքուի,
Քրիստոսի յարմար զինուոր կ'ըլլայ.
եթէ քաջաբար պատերազմի,
մեր Փրկիչէն փառքով կը պսակուի:

Պատարագի գերազանց Խորհուրդի մասին

Հաղորդութիւնը Քրիստոսի մարմինին եւ արեան խորհուրդն է, որ աշխարհի Ծայրագոյն Ճարտարապետը սահմանեց՝ մեզի հոգեւոր սնունդ ըլլալու. գործած մեղքերուն համար՝ քաւութիւն եւ թողութիւն, ապագայի համար՝ զգուշութիւն, եւ ներկայ ժամանակին համար՝ պահպանութիւն: Պէտք է գիտնալ, թէ պատարագը Աստուծոյ սիրոյ նշանն է մեզի եւ մեր սիրոյ նշանը դէպի Աստուած:

Որովհետեւ այս խորհուրդով Աստուած Իր սէրը յայտնեց մեզի եւ Իր անճառելի սիրոյն համար ինչպէս Իր Միածին Որդին խաչին համար՝ իբր մարմին եւ արիւն եւ հոգի չխնայեց, որով մեզ սիրեց, այդպէս ալ կամեցաւ այդ սիրոյ նշանը միշտ պահել մեր մէջ, որպէսզի մենք մտածենք Անոր անճառելի սիրոյն մասին. եւ Անոր փոխարէն բորբոքինք մենք՝ սիրելու համար զԻ՛նք: Այդ պատճառով Ս. Յովհաննէս կ'ըսէ, թէ՝ սիրելի՛ներ, սիրեցէ՛ք զԱստուած, որովհետեւ նախ Ի՛նք սիրեց մեզ [տես Ա. Յովհ. 4.10]:

Դարձեալ՝ Ս. Աւետարանին մէջ նոյն Ս. Յովհաննէսը կ'ըսէ, թէ՝ Զատիկի տօնէն առաջ Յիսուս գիտցաւ, թէ այս աշխարհէն պիտի երթայ Հօր մօտ. սիրեց իւրայիններն, որոնք այս աշխարհէն են, ծայր աստիճան սիրեց զանոնք [տես Յովհ. 13.1]: Հետեւաբար այս Խորհուրդին նկատմամբ անկասկած հաւատալի է Քրիստոսի անճառելի սէրը: Քանի որ եթէ մարդ մը ուրիշ մարդու մը առանց շահի գումար փոխ տայ, սիրոյ նշան է. եթէ պատիւ կ'ընէ, բարեկամութեան նշան է. իսկ եթէ որպէս յարգանք կամ ի սէր դիմացինին՝ չարչարանք քաշէ, առաւել սիրոյ նշան է: Ապա, ինչքա՜ն աւելի, որ Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, սիրեց մեզ, որ առանց փոխարէնի՝ մեր աղքատութիւնը մեծցուց, պատուեց, որով մեզ Իրեն միաւորեց: Մեծ եւ անճառելի բարեկամութիւն ըրաւ մեզի, որ մեզի համար վաստակեցաւ, անօթեցաւ, ծարաւցաւ. Իր մարմինը մեզի կերակուր տուաւ, արիւնը՝ ըմպելի. կողին ջուրը՝ լուացուելու. Իր մայրը՝ Յովհաննէսին. հագուստը՝ բաժնողներուն. իսկ հոգին՝ մեր հոգիին որպէս գին տուաւ Հօր Աստուծոյ: Տես, ուրեմն, թէ դուն ինչքա՜ն պէտք է սիրես քեզ սիրող Աստուածը:

Արդ, այս խորհուրդին պէտք է չորս բան կատարեալ ըլլայ:

Նախ՝ օրհնողը պէտք է քահանայ ըլլայ:

Երկրորդ՝ նիւթը, ցորենի հաց ըլլայ, իսկ գինին՝ որթատունկի բերքէն:

Երրորդ՝ քահանային դիտաւորութիւնը, թէ այս հացն ու գինին Քրիստոսի բերանով մարմին եւ արիւն Քրիստոսի կ'ընեմ, որովհետեւ եթէ քահանայ մը, որ հացն ու գինին ձեռքին մէջ առնէ առանց օրհնելու մտադրութեան եւ միայն Քրիստոսի խօսքը ըսէ՝ պատմելու մտադրութեամբ, այդ հացն ու գինին խորհուրդ չեն ըլլար:

Չորրորդ՝ խօսքին ձեւը, որ այսպէս է. առէ՛ք, կերէ՛ք, ասիկա մարմինս է. եւ խմեցէ՛ք ասկէ, ասիկա արիւնս է:

Իսկ եթէ քահանայ մը հարցնէ, թէ առէ՛ք կերէ՛ք ասիկա մարմինս է ըսելով, խմեցէ՛ք ասկէ, ասիկա արիւնս է ըսելով, մարմին եւ արիւն կ'ըլլայ, հապա ինչո՞ւ համար ետքէն կ'ըսենք, թէ՝ որով այս հացն ու գինին ճշմարտապէս մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոս մարմին եւ արիւն ընես. հետեւաբար դեռ չեն եղած: Պէտք է գիտնալ, որ կ'ուզէ ըսել, թէ՝ Հայր Աստուած, Սուրբ Հոգիդ ղրկէ մեզի, եւ այս հացին ու գինիին, որ Քու Միածին Որդիիդ խօսքով այս հացն ու գինին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մարմին եւ արիւն ընէ. ինչպէս որ անցեալին Կոյսին արգանդին մէջ՝ Սրբուհիի արիւնէն Միածին Որդիիդ մարմինը սքանչելապէս ըրաւ: Ուրեմն, այս որ կ'ըսէ, թէ՝ *որով*, կ'ուզէ ըսել, թէ Քու Միածին Որդիիդ՝ Քրիստոսի խօսքով, որ ըսաւ, թէ՝ ասիկա մարմինս է, եւ ասիկա արիւնս է. այդ խօսքով Դուն այս հացն ու գինի Քու Միածին Որդիիդ մարմինը եւ արիւնը ընես՝ Սուրբ Հոգիովդ փոխարկելով:

Արդարեւ, Քրիստոսի մարմինին եւ արեան մէջ միաւորուած կան Աստուածութիւնն ու բանական հոգին: Որովհետեւ ինչպէս յղացման ժամանակ այն փոքրիկ մարմինին մէջ, որ մարդուն աչքը շատ սուր նայուածքով հազիւ կարենար տեսնել անչափելին Աստուած եւ բանական հոգին միաւորուած էին, այդպէս ալ՝ փոքրիկ նշխարին մէջ եւ անոր բոլոր մասունքներու մէջ. նաեւ բեկանած [կտրած] ատեն, բոլոր նշխարներուն մէջ Քրիստոսի կայ ամբողջ Աստուածութեամբ հոգիով, մարմինով եւ արեամբ, այդպէս ալ արեան մէջ նմանապէս: Օրինակի համար, մեծամեծ լեռներն ու երկինքը մարդ ինչքան որ կրնայ նայիլ, կ'երեւնան հայելիէն ու մարդուն աչքերուն մէջ. նմանապէս փոքրիկ նշխարին եւ անոր բոլոր մասունքներուն մէջ Քրիստոս կայ: Ինչպէս որ հայելիին արեգակին առջեւ երբ բռնես, ինքն իր մէջ կ'երեւցնէ արեգակը, եւ եթէ հարիւր կտոր ընես հայելին, այդ հարիւր կտորին մէջ ալ կ'երեւի միեւնոյն արեգակը: Այսպէս ալ մէկ նշխարին մէջ կայ միեւնոյն Քրիստոսը, եւ եթէ հազար բաժին ընես, բոլորին մէջը դարձեալ կայ նոյն մէ՛կ Քրիստոսը, եւ նշխարին բաժանումով Քրիստոսի մարմինը չի բաժնուիր:

Դարձեալ՝ մէկ մարդու մը ձայնը տասը հազար հոգի կը լսէ, եւ մէկ հոգի ալ կը լսէ, սակայն ձայնը մէ՛կ է: Մէկ ծաղիկը մէկ հոգի ալ կը հոտոտայ, եւ հարիւր հոգի ալ, բայց ծաղիկին հոտը միեւնոյնն է ու չի պակսիր. մէկ ծաղիկը հազար հոգի ալ փոխ առ փոխ իրենց ձեռքին մէջ առնեն, միեւնոյն ծաղիկն է ու չի մաշիր:

Իսկ եթէ հարցնես, թէ Քրիստոսի մարմինին մէջ հոգի եւ Աստուածութիւն կայ, ապա ինչո՞ւ չի խօսիր ու չի շարժիր, կ'ըսեմ. ինչպէս ծառը ձմռան իր արմատին մէջ կենդանական զօրութիւն ունի, բայց չի կանաչնար, ինչպէս նաեւ ննջած մարդուն մէջ հոգի կայ, բայց չի լսեր ու չի տեսներ, այդպէս ալ՝ թէեւ Քրիստոսի մարմինին մէջ բանական հոգի եւ Աստուածութիւն կան, սակայն ինչպէս Քրիստոսի մարմինը արտաքնապէս կը ծածկուի հոտէն, համէն, հացի գոյնէն եւ գինիէն ու աչքերուն չի երեւիր, այդպէս ալ մարմինին ու արեան մէջ հոգի եւ Աստուածութիւն կան, սակայն երեւութապէս չեն գործեր, քանի որ մարմինին համար կերակուր չեն, այլ՝ հոգիին. այդ պատճառով ալ միայն հոգիի աչքերուն կ'երեւին՝ հաւատքի աչքերով: Որովհետեւ, եթէ խօսէր մեզի հետ, պէտք է մարդանման եւ մանկանման երեւնար, իսկ եթէ մարդանման երեւնար, ո՛վ կրնար մարմինը՝ մարմինի նման, եւ արիւնը՝ արեան նման ճաշակել. այդ պատճառով հացին ու գինիին արտաքինով Ինքզինք ծածկեց, որպէսզի մարդը ախորժելով մօտենայ ու ճաշակէ: Դարձեալ՝ ինչպէս արեգակը ամպով կը ծածկուի, իսկ կրակը հրահանի կայծքարին մէջ, այդպէս ալ Քրիստոսի մարմինը՝ հացի եւ գինիի արտաքին կերպարին տակ:

Արդ, ամփոփ կերպով իմացիր, որ Սուրբ Հաղորդութեան մէջ բազմաթիւ զարմանալիքներ կան:

Նախ՝ որովհետեւ ցորենի հացէն եւ որթի գինիէն կ'ըլլայ:

Երկրորդ՝ որ հացին ու գինիին գոյացութիւնն ու բնութիւնը Քրիստոսի մարմինի եւ արեան կը փոխուի, ինչպէս ջուրը Գալիլիոյ Կանայի հարսանիքին գինիի փոխուեցաւ:

Երրորդ՝ հացին ու գինիին արտաքին տեսակը կը մնան, սակայն հացութիւնն ու գինիութիւնը չկան.



Գրիգոր Լուսաւորիչը մկրտում է Տրդատ Երրորդին

այլ՝ միայն պատկերը կը մնայ:

Չորրորդ՝ Քրիստոսի մարմինը փոքրիկ նշխարին մէջ կայ ամբողջութեամբ, եւ նոյն ամբողջը կը գտնուի նշխարի բոլոր մասերուն մէջ. ինչպէս մեր հոգին ամբողջ մարմինին մէջ է եւ մարմինի բոլոր մասերուն մէջ:

Հինգերորդ՝ Քրիստոսի մարմինը ինչքան որ խաչին վրայ էր, այդքան ալ նշխարին մէջն է, ինչպէս եւ հիմա երկինքին մէջ է: Օրինակի համար, ծանրութիւն չունեցող բամպակ մը ինչքա՜ն տեղ կը բռնէ. իսկ երբ ափիդ մէջ հաւաքես, բուռ մը կամ փունջ մը կ'ըլլայ, ու ծանրութիւնը չի պակսիր: Եւ կամ եթէ կաթսայի մը մէջ լեցուն ջուր լեցնես, որ սառն քամիին դիմաց ըլլայ, կը սառի, եւ հազիւ կէս կաթսան կը լեցնէ. սակայն ջուրի չափը նախկինի չափն է [այսինքն՝ լեփ-լեցուն եղած ժամանակ], որովհետեւ եթէ եռացնես, նոյն կաթսան կը լեցնէ. այսպէս ալ Քրիստոսի ամբողջ մարմինը կայ փոքրիկ նշխարին մէջ, ինչպէս օխայ մը բամպակ բուռին մէջ:

Վեցերորդ՝ հացին ու գինիին արտաքինը կը մարսուին ուտողներուն կողմէ, բայց Քրիստոսի մարմինը չի մարսուիր, կամ մանրանար, կամ փշրուիր, ինչպէս որ հայելիին մէջ արեգակը կ'երեւի, որ թէեւ հայելին կոտրտես, արեգակը չի՛ կոտրուիր:

Եօթերորդ՝ Քրիստոսի մարմինը ամէն օրինած նշխարի մէջ միեւնոյնն է եւ չի՛ բազմանար: Օրինակի համար, եթէ իւրաքանչիւր աստղ մէկ-մէկ հայելի ըլլար եւ արեգակին դէմը կանգնէին, այդ ամէն հայելիներուն մէջ միեւնոյն արեգակը հաւասար կերպով կ'երեւնար. այդպէս ալ Քրիստոսի մարմինը բոլոր նշխարներուն մէջ միեւնոյնն է:

Տակաւին բազմաթիւ զարմանալիքներ կան Քրիստոսի մարմինին եւ արեան մէջ, որ միայն հաւատքով կ'ըմբռնուին եւ ո՛չ թէ աչքով ու ականջով:

Իսկ Քրիստոսի մարմինի եւ արեան ներգործութեան ու յատկութեան տեսակէտէն ասոնք իմացի՛ր.

Նախ՝ ով որ կ'ուտէ եւ կը խմէ, իր հոգիին մէջ Քրիստոսի մահուան յիշատակը կը կատարէ, որ խիստ ախորժելի է Անոր համար, քանի որ այս Խորհուրդը՝ Քրիստոսի մահուան, Անոր սիրելութեան եւ զմեզ ազատելուն յիշատակն է:

Երկրորդ՝ ներքին զմայլողութիւնը, որ մաքրուած հոգին կ'իմանայ, այդ պատճառով Դաւիթ ըսաւ, ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ Տէրը քաղցր է [տես Սաղմ. 33(34).9]: Սակայն իւրաքանչիւր մարդ, որ բան մը կ'ուտէ, նախ կը տեսնէ եւ ապա կը ճաշակէ. իսկ Դաւիթ կ'ըսէ, թէ՝ ես ըսի որ ճաշակեց՛էք. ինչո՞ւ. որովհետեւ քաղցր է. սակայն եթէ չէք հաւատար ինծի, ճաշակեցէ՛ք, որ իմանաք: Այս խօսքով խորունկ բան մը կ'իմացնէ մեզի, որ կ'ուզէ ըսել, թէ՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը միտքին լուսաւորութիւն կը պատճառեն, մի՛ կամենաք իմանալ, որ ճաշակէք, այլ ճաշակեցէ՛ք, որ իմանաք, ինչպէս որ Կղէոպեան եղբայրները. երբ Քրիստոսէ բեկեալ հացը կերան, անոնց աչքերը բացուեցան:

Երրորդ՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը հոգեկան կեանք կու տան, ինչպէս դրախտի մէջի կեանքի ծառը՝ մարմնաւոր կեանք, որ կը սնուցէր ուտողին մարմինը, որ չէր հիւանդանար ու մեռներ: Այսպէս ալ այս կեանքին մէջ Քրիստոսի մարմինը հոգին շնորհքներով կը սնուցէ, իսկ հանդերձեալին մէջ՝ փառքով: Ինչպէս Քրիստոս ըսաւ, ով որ կ'ուտէ մարմինէս ու կը խմէ արիւնէս, ան Իմ մէջ կը բնակի, եւ ես՝ անոր մէջ [տես Յովհ. 6.56]. այս է շնորհքը՝ Քրիստոսի մեր հոգիին մէջ բնակիլը: Իսկ ով որ կ'ուտէ ու կը խմէ Իմ մարմինէս ու արիւնէս, յաւիտենական կեանք ունի [տես Յովհ. 6.54]. այս է փառքը հանդերձալին մէջ, որովհետեւ ինչպէս որ մահը ուտելով մտաւ մեր բնութեան մէջ, այդպէս ալ՝ կեանքը:

Չորրորդ՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը զայն սրբութեամբ ճաշակողին զանազան առաքինութիւններ կու տայ. ինչպէս մանաւանդ պարագային, ուտողը ինչ համ որ ուզէր, այդ համը կու տար, այդպէս ալ Հաղորդութիւնը վերցնողին փափաքով զանազան առաքինութիւններ կու տայ:

Հինգերորդ՝ Քրիստոսի մարմինը մարմնաւոր առողջութիւն կու տայ հոգիով առողջին, ինչպէս որ մարմնաւոր հիւանդութիւն կու տայ հոգիով հիւանդին, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը [տես Ա. Կորնթ. 11.27–29]:

Վեցերորդ՝ Քրիստոսի մարմինը շատը մէկ կ'ընէ եւ բաժնուածները կը միաւորէ, ինչպէս կ'ըսէ Սուրբ Պօղոս, մէկ մարմին ենք մենք շատերս, քանի որ միեւնոյն հացէն կը վայելենք, այդ պատճառով ալ Հաղորդութիւնը կ'ըսուի, որ է մասնակցութիւն Քրիստոսի եւ իրարու հետ:

Եօթերորդ՝ շնորհ կու տայ արժանաւորապէս ճաշակողներուն, ինչպէս երբ երկինքէն մանանան կ'իջնէր, անոր հետ միասին ցօղ ալ կ'իջնէր. մանանան՝ Քրիստոսի մարմինը, իսկ ցօղը՝ պարգեւուած շնորհները:

Ութերորդ՝ մարդուն Արքայութիւն կը բարձրացնէ. օրինակի համար, առաքեալները Քրիստոսի մարմինն ու արիւնը ուտելէ ետք, գոհաբանական երգեր երգելով, Ձիթենեաց լեռ ելան. իսկ Յուդան, որ արժանաւորապէս չկերաւ, լեռ չբարձրացաւ, այլ երթալով մատնեց Քրիստոսին. ուստի իւրաքանչիւր անարժանապէս ճաշակող Քրիստոսի մատնիչ է:

Իններորդ՝ կը քաջալերէ եւ կը զօրացնէ հոգեւոր պատերազմին մէջ. հետեւաբար Քրիստոս մեզի օրինակ տալու համար նախ Ինքն Իր մարմինէն եւ արիւնէն կերաւ ու խմեց եւ ապա գնաց խաչի չարչարանքներուն:

Տասներորդ՝ որովհետեւ պատարագը խաչին խորհուրդն է. իսկ Քրիստոսի խաչելութեան ատեն բոլոր խորհուրդները զօրութիւն ստացան. հետեւաբար պատարագը կը կոչուի օրհնութիւններու օրհնութիւն, աղօթքներու աղօթք եւ խորհուրդներու խորհուրդ:

Շարունակելի

«Քրիստոնէական Ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Անունը՝ որպես գոյաբանական և աստվածաբանական խորհրդանիշ

↩ էջ 5

Նոր Կտակարանում Սիոնը դառնում է երկնային իրականություն՝ «երկնային Երուսաղեմը» (Եբր. ԺԲ 22): Այսպիսով՝ տեղանունը զարգանում է պատմության ընթացքում՝ երկրայինից դեպի հավիտենական:

Անունը՝ որպես մարգարեական խոսք

Աստվածաշնչում անունը հաճախ ոչ միայն նկարագրություն է, այլև մարգարեական խոսք՝ ուղղված ապագային: Երբ Աստված տալիս է անուն, Նա դրանով չի արձանագրում միայն ներկան, այլ նաև բացում է այն ուղին, որով անձը պիտի քայլի իր ողջ կյանքում: Այդ պատճառով շատ անուններ իրենց ամբողջական իմաստով հասկանալի են դառնում միայն տվյալ անձի կյանքի ավարտին: «Քանի որ Տերը ճանաչում է արդարների ճանապարհը» (Սաղմ. Ա 6). ճանապարհը նախ ճանաչվում է Աստծո կողմից, ապա՝ արտահայտվում անունով: Անունը կարծես դառնում է նախնական դատավճիռ կամ օրհնություն, որ ուղեկցում է մարդուն: Երբեմն այդ անունը կրում է նաև ներքին հակասություն, ինչպես մարդու ազատ կամքն ու աստվածային կանխատեսումը: Աստված անուն է տալիս, բայց մարդն է որոշում՝ արդյոք կապրի՞ այդ անվանն արժանավայել: Այդ պատճառով Սուրբ Գիրքը լի է անուններով, որոնք կամ փառավորվեցին իրենց իմաստով, կամ դատապարտվեցին՝ դրան հակառակ ապրելով: Այսպիսով՝ անունը դառնում է մարդու և Աստծո երկխոսության առաջին բառը:

Ցավից և տառապանքից տրված անուններ

Կան աստվածաշնչյան անուններ, որոնք ծնվում են ոչ ուրախությունից, այլ խոր ցավից: Այդ անունները կրում են պատմական և հոգևոր ողբերգության ամբողջ ծանրությունը: Օրինակ՝ (Պ)Բեն-Օնի անունը, որը Ռաքելը մահվան պահին տալիս է իր որդուն, նշանակում է «իմ ցավի որդի» (Ծննդ. ԼԵ 18): Թեպետ Հակոբը փոխում է անունը՝ Բենիամին՝ «աջ ձեռքի որդի», սակայն առաջին անունը վկայում է, որ մարդու սիրտը երբեմն անուն է տալիս արցունքի լեզվով: Այսպիսի անունները ցույց են տալիս, որ Աստվածաշնչում չի թաքցվում մարդկային տառապանքը: Անունը դառնում է պատմական վկայություն տվյալ պահի հոգեվիճակի մասին: Սակայն նույնիսկ ցավից ծնված անունները կարող են դառնալ փրկության ուղի, որովհետև Աստված «ցավը փոխում է ուրախության» (Սաղմ. Լ 5): Այս անունները մեզ սովորեցնում են, որ Աստված ներգրավված է նաև մարդու վշտի մեջ. նույնիսկ ողբը դառնում է փրկագործական պատմության մաս:

Անուններ, որ տրվեցին աստվածային դատաստանով

Որոշ անուններ Աստվածաշնչում բացահայտորեն կրում են դատաստանի իմաստ: Դրանք հիշեցումներ են այն մասին, որ Աստված ոչ միայն ողորմած է, այլ նաև արդար: Օրինակ՝ Իքաբովդ անունը նշանակում է «Իսրայելից փառքը վերացավ» (Ա Թագ. Դ 21): Այս անունը տրվում է այն պահին, երբ Ուխտի տապանակը վերցվում է Իսրայելից, և Աստծո փառքը կարծես հեռանում է ժողովրդից: Այստեղ անունը դառնում է աստվածաբանական ախտորոշում: Այն ոչ միայն նկարագրում է իրավիճակը, այլև հռչակում է հոգևոր իրականությունը: Անունը հանդես է գալիս որպես կենդանի քարոզ: Այսպիսի անունները դառնում են պատմության մեջ սառեցված նախազգուշացում: Դրանք հիշեցնում են, որ Աստծո ներկայությունը պայմանավորված է հավատարմությամբ: Երբ ժողովուրդը դավաճանում է կոչմանը, անունն է բարձրաձայնում այդ դատավճիռը: Այսպիսով՝ անունը դառնում է ոչ միայն անձնական, այլև ազգային խղճի ձայն:

Անուններ և փոխադրումներ — նոր ինքնություն

Աստվածաշնչում անվան փոփոխությունը երբեք ձևական չէ: Այն միշտ նշան է ներքին վերափոխման: Երբ Աստված փոխում է մարդու անունը, Նա դրանով հաստատում է նոր ինքնություն: «Եթե մեկը Քրիստոսով է, նոր արարած է» (Բ Կորնթ. Ե 17). այս գաղափարը նախապես արտահայտվել է անվան փոփոխության մեջ: Անվան փոփոխությունը հին մարդու մահն է և նոր մարդու ծնունդը: Այդ պատճառով Հին Կտակարանում միայն որոշ ընտրյալների անուններն են փոխվում: Սա ցույց է տալիս, որ ոչ բոլորն են պատրաստ նոր ինքնություն կրելու: Անունը փոխել նշանակում է պատասխանատվություն վերցնել նոր կոչման համար: Այդ պատճառով Աստված չի շտապում անուն փոխել: Երբ դա տեղի է ունենում, արդեն անդառնալի ընթացք է: Անունը դառնում է նոր կյանքի կնիք:

Անուններ և ժամանակ — հիշողության աստվածաբանություն

Աստվածաշնչյան անունները նաև հիշողության կրողներ են: Դրանք պահպանում են անցյալը ներկայի մեջ: Անունը հիշեցման գործիք է. «Հիշե՛ք ձեր առաջնորդներին» (Եբր. ԺԳ 7): Երբ ժողովուրդը կրկնում է անունը, նա կրկնում է պատմությունը: Այդ պատճառով սերունդները կրում են նախնիների անունները: Անունը դառնում է կամուրջ ժամանակների միջև: Այն թույլ է տալիս, որ մեկ մարդու հավատքը խոսի դարեր անց: Այս տեսանկյունից անուններն ունեն սրբագործող դեր: Դրանք կենդանի են պահում հիշողությունը: Մոռացված անունը մոռացված վկայություն է: Այդ պատճառով Սուրբ Գիրքը խնամքով պահպանում է անունների տոհմագրությունները: Դրանք ոչ թե ավելորդ մանրամասներ են, այլ փրկության պատմության քարտեզ:

Տեղանունը՝ որպես աստվածային ներկայության վկայություն

Տեղանուններն Աստվածաշնչում հաճախ կապված են Աստծո հայտնության հետ: Վայրը դառնում է սրբազան ոչ թե իր աշխարհագրությամբ, այլ այնտեղ տեղի ունեցած աստվածային միջամտությամբ: «Այս վայրը սուրբ է» (Ելք Գ 5). վայրը սրբանում է հանդիպումից, տեղանունը դառնում է հիշեցում այդ հանդիպման մասին: Այդ պատճառով նույն վայրը կարող է դառնալ ուխտի նշան սերունդների համար: Տեղանունը կրում է հայտնության հիշողությունը: Երբ հավատացյալը կրկնում է այդ անունը, նա մտնում է նույն հոգևոր տարածքը: Այսպիսով՝ տեղանունը դառնում է աստվածաբանական կատեգորիա: Այն վկայում է, որ Աստված գործում է որոշակի պատմության մեջ: Սրբազան աշխարհագրությունը ձևավորվում է անվան միջոցով:

Անունը և կոչման սահմանը եկեղեցու մեջ

Եկեղեցին աստվածաշնչյան անունների կենդանի շարունակությունն է պատմության մեջ: Այն պարզապես չի հիշում անունները, այլ ապրում է դրանցով: Երբ մարդը մկրտվում է, նա ստանում է անուն՝ ոչ միայն որպես տարբերակիչ նշան, այլև հոգևոր կոչում: «Դուք այլևս օտարներ չեք, այլ Աստծո տան անդամներ» (Եփես. Բ 19). անունը հաստատում է պատկանելությունը: Եկեղեցում անունը դառնում է աղոթքի առարկա: Սուրբ Պատարագում հիշատակվող անունները մուտք են գործում երկնային գրանցման մատյան: Այդ պատճառով Հայ Եկեղեցին խստորեն պահպանել է սրբերի անունների ավանդույթը: Անունը դառնում է բարեխոսության կապ: Երբ մարդը կրում է սրբի անուն, նա կոչված է նմանվելու այդ սրբի հավատքին: Այսպես անունը դառնում է ոչ միայն անձնական, այլև եկեղեցական պատասխանատվություն:

Հայ եկեղեցական անունների աստվածաշնչյան արմատները

Հայ Առաքելական Եկեղեցին իր անունների մեծ մասը ժառանգել է Սուրբ Գրքից: Դրանք երբեք պարզապես ազգային կամ մշակութային ընտրություն չեն եղել: Օրինակ՝ Հովհաննես անունը կրում է «Աստծո շնորհ» նշանակությունը, և պատահական չէ, որ այն լայնորեն տարածված է հայերի մեջ: Սա խոսում է մեր հավատքի մեջ շնորհի աստվածաբանության խոր արմատավորման մասին: Գրիգոր անունը նշանակում է «արթուն, զգոն», և հայ եկեղեցական կյանքում այն կապված է հոգևոր արթնության հետ: Ներսես նշանակում է «Աստծուց ծնված» կամ «աստվածային ծագում ունեցող», ինչն արտահայտում է Եկեղեցու հայրերի աստվածընկալումը: Վարդան անունը թեև ուղղակիորեն աստվածաշնչյան չէ, բայց միաձուլվում է սրբության և վկայության գաղափարին: Այս անունները դառնում են հավատքի լեզու: Դրանք ցույց են տալիս, որ հայ ժողովրդի ինքնությունը կառուցվել է աստվածաշնչյան անվանաբանության վրա:

Անունը և վկայությունը. Նահատակության ոգին

Հայ Եկեղեցու նահատակների անուններն աստվածաշնչյան տիպաբանության կենդանի շարունակությունն են: Նահատակությունն ինքնին անվան ամբողջական իրագործումն է: «Եղիր հավատարիմ մինչև մահ» (Հայտն. Բ 10). անունը դառնում է կյանքի վերջնական խոստովանություն: Վարդանանց անունները չեն ընկալվում պարզապես որպես պատմական հիշատակ. դրանք ապրում են որպես կենդանի վկայություն: Նահատակների անունները հիշատակվում են ոչ թե որպես կորուստ, այլ որպես հաղթություն: Այդ պատճառով Հայ Եկեղեցին պահպանում է նահատակների անունները սրբության բարձրագույն աստիճանում: Անունը դառնում է խաչի նշան: Այդ անունները հնչում են որպես քարոզ: Դրանք ասում են, որ հավատքը գաղափար չէ, այլ կյանքի արժեք ունեցող ճշմարտություն: Այսպես՝ հայ նահատակների անունները միանում են աստվածաշնչյան արդարների շարքին:

Անուն դնելը աստվածաշնչյան մտածողություն է

Այս ամբողջ ճանապարհը մեզ բերում է մի եզրակացության. անունն Աստվածաշնչում երբեք պատահական չէ: Այն էության խտացում է մեկ բառի մեջ: Անուն դնել նշանակում է պատասխանատվություն վերցնել ապագայի համար: Այդ պատճառով քրիստոնյան չի կարող անհիմաստ անուն դնել: Ամեն անուն պետք է աղոթքով տրվի, որովհետև անունը կամ օրհնություն կլինի, կամ դատաստան: Իսկ բոլոր անունների վրա կա մեկ Անուն, որ լուսավորում է մյուսներին: Այդ Անունը ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ է՝ անունների Անունը, Հացի տանը ծնված Կյանքի հացը: Եվ Եկեղեցին կոչված է մշտապես կրկնելու այդ Անունը մինչև աշխարհի վախճանը:

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Պատմության խորհուրդը

↩ էջ 6

Այս առումով ուշագրավ է Արիստակես վարդապետ Լաստիվերցու «Պատմությունը մեր շրջապատի այլացեղ ազգերից մեզ հասած արհավիրքների մասին» խորագրով երկը՝ պատճառահետևանքային կապերի, պատմության տրամաբանության բացահայտումով: Իր հիշատակարանում 11-րդ դ. վարդապետը գրում է. «Իսկ ինչ որ գրվեց այս մատյանի մեջ, լրիվ չէ, այլ միայն եղած, մեր գլխով անցածների սկիզբն է, որովհետև ամբողջ կատարվածը մտաբերել ու գրի առնել չկարողացանք. իսկ այս ամենը ներկայացրինք նրա համար, որպեսզի ընթերցելով՝ դուք իմանաք, որ մեզ պատահած բոլոր փորձությունների պատճառը մեղքերը եղան, որ նայելով մեզ՝ զարհուրեք ու վախենաք Տիրոջից, դողաք Նրա զորության ահից, նախօրոք խոստովանությամբ ու ապաշխարությամբ կանխեք պատուհասները և ոչ թե գալուց հետո դիմակայեք նրանց...»:

Նույնքան ցավալի են սերնդեսերունդ պատմության դասերը մոռացության մատնելը, Աստվածաշունչ մատյանն ու մեր երախտավոր մեծերի՝ խրատներով ու դասերով մեզ ավանդած գրքերը չկարդալը: «Հայության վիշտը ես միայն գերեզմանի մեջ կմոռանամ,— ասում էր Լեոն,— մենք ենք մեղավորը, մենք՝ մտավորականներս.... Մեր ժողովուրդը մեղավոր չէ: Այլ մենք, որ այնպես հիմար եղանք, տգետ, որ հավատացինք շահամոլ, դրամատիրական-բուրժուական Եվրոպային.... Շատ կուզենայի, որ նոր սերունդը կարդա գիրքս՝ չկրկնելու համար մեր գործած ոճիրները»:

Հետևաբար՝ մեզ հետ պատահած ամեն չարիքի և բարիքի պատասխանատվության կրողները հենց մենք ենք՝ մեր ազատ կամընտրությամբ, անկախ այն բանից՝ գիտակցում ենք դա թե ոչ: Եվ մենք պիտի ի խորոց սրտի ապաշխարենք, արդարության ճանապարհներով ընթանանք, ամեն հարցում ապավինենք Աստծուն և հուսանք, որ հավատարիմ Իր Ուխտին՝ կլսի մեր աղաչանքները, կայցելի մեզ՝ անձանձիր օգնելով, փրկելով ու պաշտպանելով, ինչպես որ բազմիցս պատահել է մեր պատմության օրհասական պահերին, և ի կատար կածի մեր ազգային երազանքները: Եվ մենք ի խորոց սրտի պիտի հավատանք՝ Աստված, որ Քրիստոսով որդեգրեց մեզ, հայրաբար էլ կգթա մեզ. «Ինչպես որ մի հայր գթում է իր որդիներին, այնպես Տերը պիտի գթա Իրենից երկյուղ կրողներին: Նա գիտե կազմվածքը մեր, և հիշում է, որ հող ենք մենք» (Սաղմ. 102.13–14):

«Եվ եթե Իմ ժողովուրդը, որի վրա Իմ անունն է դրված, զղջա, աղոթի և Իմ երեսը փնտրի ու հետ դառնա իր չար ճանապարհներից, Ես էլ երկնքից կլսեմ, կներեմ նրանց և կբժշկեմ նրանց երկիրը» (Բ Մնաց. 7.14):

Եթե «դառնաս դեպի Քո Տեր Աստվածը, քո հոգով ու էությամբ լսես Նրա խոսքն այն բոլոր գործերում,— ասում է Մովսես մարգարեն,— որ ես հաղորդում եմ քեզ այսօր, ապա Տերը կների քո բոլոր մեղքերը, կողորմի քեզ ու դարձյալ ի մի կհավաքի բոլոր այն ժողովուրդների միջից, որոնց մեջ ցրել էր քեզ: Եթե դու ցրիվ ես եկել երկրի մի ծայրից մինչև մյուս ծայրը, այդտեղից էլ կհավաքի քեզ քո Տեր Աստվածը: Այնտեղից էլ կվերցնի քեզ քո Տեր Աստվածը և քո Տեր Աստվածը քեզ կբերի քո հայրերի ժառանգած երկիրը: Կժառանգես այն, քեզ համար լավ կլինի, և Աստված քեզ քո հայրերից տասնապատիկ ավելի կբազմացնի: Տերը կմաքրի քո և քո սերնդի սիրտը, որպեսզի քո Տեր Աստծուն սիրես քո ամբողջ հոգով ու էությամբ, որպեսզի ապրեք դու և քո սերունդը: Այն ժամանակ քո Տեր Աստվածն այս նզովքները կթափի քեզ հալածող քո թշնամիների ու քեզ ատողների գլխին» (Բ Օր. 30.2–7):

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.02.2026 թ.
Տպաքանակը՝ 1015